

Գրականությանը քննարկելու ժողովը



Վ. Ի. ԼԵՆԻՆ


ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԿՈՒՍՇՐԱՏ

1934

ՁԵՐԵՎԱՆ

Faint, illegible markings at the top of the page.



1864

1864

1864



Վ. Ի. ԼԵՆԻՆ

19348
A $\frac{\pi}{38556}$

ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Մ. ԶԱԳԱՐՅԱՆ
Խմբագրեց Հ. ԳՍԱՊԱՐՅԱՆ



В. И. ЛЕНИН
О работе в деревне.

Партиздат 1934 Эривань

«Յեքն մեճ վաղը կարողանայինք տալ 100 հազար առաջնակարգ սրահսօր, նրանց մասակարարել բենզին, նրանց մասակարարել մեքենավարներ (դուր ցաք լավ գիտե՛ք, վա՛ր առայժմ սա ֆանսագիա չե՛), ապա միջոտի գյուղացիք կտանք. «Յես կոմունիստի կողմնակից եմ» (այսինքն կոմունիստի կողմնակից)»:

Լ. Ն. Ն. Ն., «Գյուղի աշխատանքի մասին» 0-4(2) և VIII համագումարին տված զեկուցումից:

«Հնգամյակի ընթացում գյուղատնտեսությունը հանճնված է. ա) 120 հազարից ավելի նոր սրահսօրներ 1900 հազ. ուժի կարգությամբ. բ) 1600 միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենա...

...կազմակերպված է 2446 մեքենասրահսօրային կայան...

...կազմակերպված է 200 հազարից ավելի կալիկիսիվ տնտեսություն...

Այս նույն ժամանակախոջում կազմակերպված է 5 հազ. խորհրդային տնտեսություն (հացահատիկային, անասնապահական ու սելանիկական կուլտուրաների), ընդլորում կուլտեսությունները խորհրդային տնտեսությունների հետ միասին ընդգրկում են բոլոր ցանքերի սարածության մոտ 80%-ը»:

Համ(2) և 4 և 4 լե՛կ 4 լ՛՛՛ Նոմվարյան սլենտակի (1933 թ. Նոմվարի 7—12) ըստանմովից:



ՋԵԿՈՒՅՈՒԹ ԳՅՈՒԳԻ ԱԶԽԱՏԱՆՔԻ ԲԵՐՄԻՆ
ԹԿ(Ր)Կ VIII ՀԱՄԵԳՈՒԹԱՐԻՆ
(1919 Ք. ՄԱՐՏԻ 23)

Ընկերներ, յես պետք ե ներողություն խնդրեմ, զոր ինձ
չնաջողվեց ներկա գտնվել գյուղի աշխատանքի հարցի առթիվ
համագումարի ընարած սեկցիայի բոլոր նիստերին: Ուստի իբրև
լրացում կլինեն այն ընկերների նաևերը, զորոնք այս սեկցիային
մասնակցել են նրա աշխատանքի հենց սկզբից: Սեկցիան զերջի-
զերջո մշակել ե թեզեր, զորոնք հանձնված են հանձնաժողովին
ե զորոնք ձեզ պետք ե զեկուցվեն: Յես կուզելի կանգ առնել
հարցի ընդհանուր նշանակության վրա, թե ինչպես ե նա
զրվել մեր առջև սեկցիայի աշխատանքից հետո ե թե ինչպես ե
նա, իմ հայացքով, զրվել այժմ կուսակցության առջև ամբողջու-
թյամբ:

Ընկերներ, միանգամայն բնական ե, զոր պրոլետարական
հեղափոխության զարգացման ընթացքում մենք հարկ ենք զգում
առաջին տեղը դասել հասարակական կյանքի ամենարարձր ու կարե-
որ հարցերից մերթ մեկը, մերթ մյուսը: Միանգամայն բնական ե,
կոր հեղաշրջման ժամանակ, զորը շոշափում ե ե չի կարող չշոշա-
փել կյանքի ամենախոր հիմքերը, բնակչության ավենալայն
մասսաները,—վոչ մի կուսակցություն, վոչ մի, նույնիսկ մաս-
սաներին ամենից մտաիկ կանգնած, կառավարություն բացար-
ձակապես ի վիճակի չե մեկնել ընդգրկելու կյանքի բոլոր կողմերը:
Յեով յեթե այժմ մենք հարկ ենք զգում կանգ առնելու գյուղի
աշխատանքի հարցի վրա ե այս հարցից առանձնացնելու առա-
վելապես միջակ գյուղացիության գրությունը,—ապա պրոլետա-
րական հեղափոխության զարգացման տեսակետից առհասարակ
այստեղ վոչ մի տարրերնակ ու աննորմալ բուն չի կարող լինել:

Հասկանալի յի, վոր պրոլետարական հեղափոխությունն սկսեց յերկու թշնամի դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի հիմնական հարաբերությունից: Հիմնական խնդիրն եր՝ իշխանությունը հանձնել բանվոր դասակարգի ձեռքը, ապահովել նրա դիկտատուրան, տապալել բուրժուազիային և խել նրանից նրա իշխանության այն տնտեսական աղբյուրները, վոր անսպա-մանորեն խոչընդոտ են հանդիսանում ամեն մի սոցյալիստական շինարարության գործում առհասարակ: Մենք բոլորս, վորքան վոր մենք ծանոթ ենք մարքսիզմին, յերբեք չենք կասկածել այդ ճշմարտության մեջ, վոր կապիտալիստական հասարակության մեջ, այդ հասարակության բուն տնտեսական կառուցվածքի համաձայն, վճռական նշանակություն կարող է ունենալ կամ պրոլետարիատը, կամ բուրժուազիան: Այժմ մենք տեսնում ենք շատ նախկին մարքսիստներ, — որինակ, մենշևիկները բանակից, — վորոնք պնդում են, վոր իբր պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ վճռական պայքար մղելու շրջանում կարող է գերիշխել դեմոկրատիան առհասարակ: Այսպես են ասում եսերների հետ ամբողջովին համաձայնության յեկած մենշևիկները: Կարծես թե բուրժուազիան ինքը չի ստեղծում կամ վերացնում դեմոկրատիան, նայած նրան, թե ինչն է իրեն ձեռնտու: Իսկ քանի վոր այսպես է, ապա բուրժուազիայի ու պրոլետարիատի սրված պայքարի ժամանակ վոչ մի խոսք չի կարող լինել դեմոկրատիայի մասին առհասարակ: Միայն դարմանում ես, թե ինչպիսի արագությամբ այս մարքսիստները կամ իբրև թե մարքսիստները, — որինակ, մեր մենշևիկները, — ինչպիսի արագությամբ են նրանք մերկացնում իրենց, ինչպիսի արագությամբ է դրսևորվում նրանց իսկական բնությունը, մանր-բուրժուական դեմոկրատի-ների բնությունը:

Մարքսն իր ամբողջ կյանքում ամենից ավելի պայքարել է մանր-բուրժուական դեմոկրատիայի և բուրժուական դեմոկրատիզմի պատրանքների դեմ: Մարքսն ամենից ավելի ծաղրել է ազատության ու հավասարության վերաբերյալ պարսպ խոսքերը, յերբ նրանք թաղցնում են բանվորների սովամահության աղա-տությունը, կամ իր աշխատանքային ուժը ծախող մարդու հավասարությունը բուրժուայի հետ, վորը կարծես թե ազա-

շուկայում ազատ ու իրավահավասար կերպով գնում և նրա աշխատանքը և այլն: Մարքան իր տնտեսագիտական բոլոր յերկերում պարզաբանել և այս կարելի չե ասել, վոր Մարքսի աժրող շկայիտայլը նվիրված և այն ճշմարտության պարզաբանմանը, վոր կապիտալիստական նասարակությամ ճիմնական ուժերը հանդիսանում են և կտրոջ են հանդիսանալ միայն բուժուագիտան ու պրոլետարիատը,— բուրժուազիտան իրրև այս կապիտալիստական հասարակության կազուցողը, իրրև նրա ղեկավարը, իրրև նրա շարժիչը,— պրոլետարիատն իրրև նրա ղերեղմանափորը, իրրև միակ ուժը, վորն ընդունակ և փոխարինելու նրան: Հագիվ թե գանվի Մարքսի վորրև աշխատության մեջ ղեթ մի գրուեթ, վոր նվիրված չլինի այս բանին: կարելի չե ասել, վոր աժրողջ աշխարհի սոցիալիստաները II Ինտերնացիոնալում անթիվ անգամ յերդվիլ են բանվորներին, վոր ընդունում են այս ճշմարտությունը: Բայց յերր բանը հասավ պրոլետարիատի ու բուրժուագիտայի խակտան և այն ել վճռական պայքարին իշխանության համար, այն ժամանակ մենք տեսանք, վոր մեր մենջևիկներն ու եսերները, ինչպես և աժրողջ աշխարհի հին սոցիալիստական կուսակցությունների առաջնորդները, մոռացան այս ճշմարտությունը և սկսեցին դուա միխանիկորեն կրկնել ֆիլիստերական ֆրագներ ղեմոկրատիզմի մասին առհասարակ:

Մեղնում յերբեմն փորձում են այս խոսքերին ինչ-վոր կարծես ավելի «պինդ» ընույթ տալ, յերբ ասում են՝ Շիեմոկրատիայի դիկտատուրա: Սա արդեն կատարյալ անհեթեթություն և: Մենք պատմությունից շատ լավ դիտենք, վոր ղեմոկրատական բուրժուազիտայի դիկտատուրան նշանակում եր վոչ այլ ինչ, բայց յեթև դաժան հաշվետես ապատամբ բանվորների հետ: Այսպես և յեղել սկսած 1848 թվից,— համենայն ղեպս վոչ ուչ բայց տաանձին որինակներ կարելի չե ղտնել¹⁾ և ավելի առաջներու: Պատմությունը մեզ ցույց և տալիս, վոր հենց բուրժուական ղեմոկրատիայի մեջ և լայնորեն ու ազատ կերպով ծավալվում պրոլետարիատի ու բուրժուազիտայի ամենասուր պայքարը: Մենք ասիթ ունեցանք գործնականում համողվելու, վոր այս ճշմարտությունն իրավացի չե: Յեվ յեթև խորհրդային կառավարության քայլերը սկսած 1917 թվի հոկտեմբերից բոլոր արմա

տական հարցերում անքի էյին ընկնում իրենց հաստատությամբ, ապա հենց այն պատճառով, վոր այս ճշմարտությունից մենք յերբեք չենք նահանջել, նրան յերբեք չենք մոռացել: Միայն մի դասակարգի — պրոլետարիատի — դիկտատուրան կարող է լուծել բուրժուազիայի դեմ գերիշխանության համար պայքարելու հարցը: Բուրժուազիային կարող է հաղթել միայն պրոլետարական դիկտատուրան: Բուրժուազիային տապալել կարող է միմիայն պրոլետարիատը: Մասսաներին իր հետևից տանել բուրժուազիայի դեմ կարող է միայն պրոլետարիատը:

Այստեղից, սակայն, վոչ մի դեպքում չի հետևում, — սա խորագույն սխալը կլինի, — վոր կոմունիզմի հետագա կառուցման մեջ էլ, յերբ բուրժուազիան արդեն թողալված է, յերբ քաղաքական իշխանությունն արդեն պրոլետարիատի ձեռքին է, — իբրև թե հետագայումն էլ մենք պետք է կառավարվենք առանց միջին, միջանկյալ տարրերի մասնակցության:

Բնական է, վոր հեղափոխության սկզբին, — պրոլետարական հեղափոխության, — նրա գործիչների ժամող ուշադրությունը սևեռվում է գլխավորի, հիմնականի վրա՝ պրոլետարիատի գերիշխանության և բուրժուազիային հաղթելու միջոցով այս գերիշխանության ապահովման վրա, — այն բանի ապահովման, վոր բուրժուազիան նորից չկարողանա վերադառնալ իշխանության: Մենք շատ լավ գիտենք, վոր մինչև այժմ էլ բուրժուազիայի ձեռքին մնում են առավելություններ, վորոնք կապված են ուրիշ յերկրներում ունեցած նրա հարստությունների հետ, կամ հանդիսանում են, յերբեմն նաև մեզ մոտ, փողային հարստությունը: Մենք լավ գիտենք, վոր կան ավելի փորձված սոցիալական տարրեր, քան պրոլետարները, վորոնք սգնում են բուրժուազիային: Մենք լավ գիտենք, վոր բուրժուազիան չի թողել իր իշխանությունը՝ վերադարձնելու միտքը, չի գաղաբեցրել իր գերիշխանությունը վերականգնելու փորձերը:

Բայց սա դեռ ամենևին բոլորը չէ: Բուրժուազիան, վոր ամենից ավելի յե առաջադրում «վորտեղ լավ, այնտեղ հայրենիք» սկզբունքը, բուրժուազիան, վոր փողի իմաստով միշտ էլ յեղել է ինտերնացիոնալիստ, — բուրժուազիան համաօխարհային մասօտարով այժմ դեռևս մեզմից ուժեղ է: Նրա գերիշխանու-

թյունն արագորեն խախտվում է, նա տեսնում է աշխարհի որինակներ, ինչպես հունդարտկան հեղափոխությունը.— վորի մասին մենք բախա ունեցանք յերեկ հաղորդելու ձեզ, և վորի մասին այսօր հաստատող տեղեկություններ են գալիս,— նա արգեն սկսում է հասկանալ, վոր նրա գերլիշխանությունը աստատվում է։ Նրա մոտ գործողությունների ազատությունն չի մնում։ Բայց այժմ, յեթե հաշի տոնենք նյութական միջոցներն ամբողջ աշխարհի մասշտաբով, չի կարելի չընդունել, Վոր բուրժուազիան նյութապես այժմ դեռ մեզնից ուժեղ է։

Ահա թե ինչու մեր ուշադրություն, մեր պրակտիկ գործունեությունն ինչու ասանորդը նվիրվել են և պետք է նվիրվելին այս հիմնական հարցին,— բուրժուազիայի տապալմանը, պրոլետարիատի իշխանություն հաստատմանը, բուրժուազիայի՝ իշխանության վերադառնալու ամեն մի հնարավորության վերացմանը։ Սա կատարելապես բնական է, որինական, անխուսափելի, և այս տեսակետից շատ ու շատ բան արված է հաջողությունով։

Իսկ այժմ մենք պետք է հերթի դնենք մյուս խավերի հարցը։ Մենք պետք է,— սա մեր ընդհանուր յեզրակացությունն էր ազդարարային սեկցիայում, և մենք հավատացած ենք, վոր սրան կհամաձայնեն ըստը կուսակցական աշխատողները, վորովհետև մենք միայն ամփոփել ենք նրանց դիտողությունների փորձը,— մենք պետք է իր ամբողջ ծավալով հերթի դնենք միջակ գյուղացիության հարցը։

Իհարկե, կդանվեն մարդիկ, վորոնք փոխանակ մեր հեղափոխության ընթացքի մասին մտածելու, փոխանակ խորհրդածելու, թե ինչ խնդիրներ են դրված այժմ մեր առջև,— փոխանակ այս բանի, կողապործեն Խորհրդային իշխանություն ամեն մի քայլն այն տիպի հոհոցի ու վառ քննադատության համար, ինչ մենք տեսնում ենք պարոնայք մենշևիկների ու ալ եսերների մոտ։ Սրանք այնպիսի մարդիկ են, վորոնք մինչև այժմ չեն հասկացել, վոր իրենք ընարություն պիտի անեն մեր և բուրժուական դիկտատուրայի միջև։ Մենք նրանց նկատմամբ շատ համբերատարություն և նույնիսկ բարեհոգություն ենք ցուցաբերել, մենք նրանց կրկին հնարավորություն կտանք փորձե-

լու մեր այս բարեհոգութիւնը, բայց մոտ ապագայում այս համբերատարութեանն ու բարեհոգութեանը մենք վերջ կդնենք և, յիսկ նրանք իրենց ընտրութիւնը չկատարեն, մենք կատարյալ լրջութեամբ նրանց կառաջարկենք մեկնել Կոլչակի մոտ: (Մտփառագործութիւններ): Մենք առանձին փայլուն մտաւոր հատկութիւններ չենք սպասում այդ մարդկանցից: (Միծաղ): Բայց կարելի չէր սպասել, վոր իրենց վրա կրելով Կոլչակի գաղանթութիւնները, նրանք կհասկանան, վոր մենք իրավունք ունենք նրանցից պահանջելու, վոր նրանք ընտրութիւն կատարեն մեր և Կոլչակի միջև Յիսկի Հոկտեմբերից հետո առաջին ամիսներին շատ միամիտ մարդիկ հիմարութիւն ունեյին կարծելու, վոր պրոլետարիատի դիկտատուրան ինչ-վոր անցողական, պատահական բան է, ապա այժմ նույնիսկ մենչևիկներն ու եսերները պետք է հասկանային, վոր սա ինչ-վոր որինչաչափ բան է այն պայքարում, վոր ընթանում է միջազգային ամբողջ բուրժուազիայի դրոհի պայմաններում:

Իրականում ստեղծվել են միայն յերկու ուժ. բուրժուազիայի դիկտատուրա և պրոլետարիատի դիկտատուրա: Ով այս բանը չի իմացել Մարքսից, ով այս բանը չի իմացել բոլոր մեծ սոցիալիստներին յերկերից, — նա յերբեք սոցիալիստ չի յեղել, սոցիալիզմից վոչինչ չի հասկացել, այլ միայն իրեն անվանել է սոցիալիստ: Այս մարդկանց մենք կարճ ժամկետ ենք տալիս խորհրդածելու և պահանջում ենք, վոր նրանք այս հարցը լրջեն: Յես սրանց մասին հիշատակեցի այն պատճառով, վոր սրանք այժմ ասում են կամ կասեն. «Բոլշևիկները հարց են դրել միջակ գլուղացիութեան մասին, ուզում են խաղ խաղալ նրա հետ»: Յես շատ լավ գիտեմ, վոր այսպիսի և շատ ավելի վատ փաստարկութիւնը լայն տեղ է գտնում մենչևիկյան մամուլում: Մենք դա մի կողմ ենք շարտում, մենք յերբեք նշանակութիւն չենք տալիս մեր թշնամիներին բարբաջանքին: Մարդիկ, վորոնք մինչև այժմ ընդունակ են փախտակութիւն անելու բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև, կարող են ասել ինչ վոր ուզեն: Մենք ուրիշ ճանապարհով ենք գնում:

Մեր ուզին ամենից առաջ վորոշվում է ուժերի դասակարգային հաշիւառումով: Կապիտալիստական հասարակութեան մեջ զար-

դանում և բուրժուազիայի ու պրոլետարիատի պայքարը: Քանի
դեռ չի վերջացել այս պայքարը, մեր խիստ ուշադրութունը
կենտրոնացված պիտի լինի այն բանի վրա, Վոր նա հասցվի
մինչև վերջ: Նա դեռևս մինչև վերջ չի հասցված: Այս պայքա-
րում արդեն շատ բան և հաջողվել անել: Այժմ միջազգային
բուրժուազիան արդեն չի կարող դորձել ազատ ձեռքերով: Սրա
լավագույն ապացույցն այն է, Վոր տեղի յն ունեցել հունգարա-
կան պրոլետարական հեղափոխութունը: Ուստի պարզ է, Վոր
գյուղում մեր շինարարութունն արդեն դուրս է յեկել այն շրջա-
նակներից, յերբ ամեն ինչ յենթարկված էր իշխանության համար
պայքարելու հիմնական պահանջին:

Այս շինարարութունն անցիլ է յերկու գլխավոր փուլ:
1917 թ. հոկտեմբերին մենք իշխանութունը զբաղեցինք ամ-
բողջ գյուղացիության և ն միասին: Սա բուրժուական հեղափոխու-
թուն էր, քանի՞ Վոր գյուղում դեռևս չէր ծավալվել դասակար-
դային պայքարը: Ինչպես յս արդեն ասացի, գյուղում միայն
1918 թ. ամառը սկսվեց իսկական պրոլետարական հեղափոխու-
թունը: Յեթև մենք չկարողանայինք բարձրացնել այս հեղա-
փոխութունը, մեր աշխատանքը լրիվ չէր լինի: Առաջին փուլն
էր իշխանության զբաղումը քաղաքում, կառավարման խորհրդա-
յին ձևի հաստատումը: Յերկրորդ փուլն այն էր, Վորը բոլոր
սոցիալիստների համար հիմնականն և հանդիսանում, առանց Վորի
սոցիալիստները սոցիալիստներ չեն՝ պրոլետարական ու կիսա-
պրոլետարական տարրերի առանձացումը գյուղում, նրանց համա-
խմբումը քաղաքային պրոլետարիատի հետ գյուղի բուրժուազիայի
դեմ պայքարելու համար: Այս փուլը նույնպես հիմնականում ա-
վարտված էր Այն կազմակերպութունները, Վոր մենք սկզբնապես
սանդեմ էինք սրա համար՝ չքավորության կոմիտեները, այնքան
են ամրացել, Վոր մենք հնարավոր դատանք զբանք փոխարինելու
ճիշտ ընտրված խորհուրդներով, այսինքն՝ գյուղական խորհուրդնե-
րը վերակազմել այնպես, Վոր նրանք դատանս գյուղի դասակարգա-
յին գերիշխանության որդաններ, պրոլետարական իշխանության
որդաններ: Այնպիսի միջոցառումներ, ինչպես են սոցիալիստական
հողաշինարարության վերաբերյալ և սոցիալիստական յերկրա-
դորության անցնելու վերաբերյալ որենքը, — Վոր վերջերս

անցել է Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ղեկավարի, իհարկե, հայտնի
յե բոլորին, — ամփոփում են անցած շրջանը մեր պրոլետարա-
կան հեղափոխության տեսակետից:

Գլխավոր բանը, վոր հանդիսանում է պրոլետարական հեղա-
փոխության առաջին և հիմնական խնդիրը, մենք արել ենք:
Յեվ հենց այն պատճառով, վոր մենք այս արել ենք, — հերթի յե
դրվել ավելի բարդ մի խնդիր՝ վերաբերմունքը դեպի միջակ գյու-
ղացիությունը: Ով վոր կարծում է, թե այս խնդրի առաջադրումը
ինչ — վոր նմանություն ունի մեր իշխանության բնույթի թուլաց-
ման հետ, պրոլետարիատի դեկտատուրայի թուլացման հետ,
մեր հիմնական քաղաքականության փոփոխության, թեկուզ մաս-
նակի, թեկուզ ամենաթույլ փոփոխության հետ, — նա միան-
գամայն չի հռովանդում պրոլետարիատի խնդիրները, կոմունիս-
տական հեղաշրջման խնդիրները: Յես հավատացած եմ, վոր մեր
կուսակցության մեջ այսպիսի մարդիկ չեն գտնվի: Յես միայն
կողմնակի նախազգուշացնել ընկերներին այն մարդկանցից, վորոնք
կգտնվեն բանվորական կուսակցությունից դուրս և այսպես կա-
սեն վոչ թե այն պատճառով, վոր սարգիսում է վորևե աշխարհա-
հայացքից, այլ պարզապես նրա համար, վոր փչացնեն մեր գործը
և ոգնեն սպիտակ-գլուխականներին, — ավելի պարզ ասած,
վորպեսզի մեր դեմ գրգռեն միջակ գյուղացուն, վորը մշտապես
տատանվում եր, չի կարող չտատանվել և դեռ յեկար ժամանակ
պիտի տատանվի: Նրան մեր դեմ գրգռելու համար նրանք կասեն.
«Տեսե՛ք, նրանք ձեզ հետ խաղ են խաղում: Նշանակում է՝ հաշվի
յեն առել ձեր ապստամբությունները, նշանակում է՝ տատանվե-
ցին» և այլն և այլն: Հարկավոր է, վոր մեր բոլոր ընկերները
դիմված լինեն այսպիսի ագիտացիայի դեմ: Յեվ յես հավատացած
եմ, վոր նրանք կզինվեն, յեթե մենք այժմ կարողանանք այս հարցը
դնել դասակարգային պայքարի տեսակետից:

Կատարելապես պարզ է, վոր այս հիմնական հարցը ավելի
բարդ, բայց վոչ պակաս կենսական խնդիր է, քե ի՞նչպես ճշգրիտ
վարձով պրոլետարիատի վերաբերմունքը դեպի միջակ գյուղացիությունը,
Ընկերներ, այս հարցը մարքսիստների համար դժվարություն չի
նհրկայացնում թեորիական տեսակետից, վորը յուրացրել է բան-
վորների՝ հսկայական մեծամասնությունը: Յես կհիշեցնեմ, որի-

նակ, վոր կառուցելու ազրարային հարցի վերաբերյալ գրքում, վորը գրված է դեռ այն ժամանակ, յերբ կառուցելին ճիշտ եր չարագրում Մարքսի ուսմունքը և անվիճելի հեղինակութունն եր համարվում այս բնագավառում, — ազրարային հարցի վերաբերյալ այս գրքում կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու առթիվ նա ասում է. սոցիալիստական կուսակցութայն խնդիրն և հանդիսանում գյուղացիութայն չեզոքացումը *, այսինքն՝ այն բանին հասնելը, վոր գյուղացին չեղոք մեա պրոլետարիատի ու բուրժուատիայի միջև մղվող պայքարում, վոր գյուղացին չկարողանա բուրժուատիային ակտիվ ոգնութունն ցույց աւել մեր դեմ:

Բուրժուատիայի տիրապետութայն հսկայական ժամանակաշրջանում գյուղացիութայնը պաշտպանում եր նրա իշխանութունը նա բուրժուատիայի կողմն եր: Սա հասկանալի յե, յեթե նկատի ունենանք բուրժուատիայի տնտեսական ուժը և նրա գերիշխանութայն քաղաքական միջոցները: Մենք չենք կարող հույս ունենալ, վոր միջակ գյուղացին անհապաղ կանցնի մեր կողմը, բայց յեթե մենք ճիշտ քաղաքականութուն վարենք, ապա վորոշ ժամանակից հետո այս տատանումները կդադարեն, և գյուղացին կարող է կանգնել մեր կողմը:

Դեռևս Ենգելսը, վոր Մարքսի հետ միասին հիմք է դրել գիտական մարքսիզմին, այսինքն՝ այն ուսմունքին, վորով ղեկավարվում է մեր կուսակցութունը մշտապես և մանավանդ հեղափոխութայն ժամանակ, — դեռևս Ենգելսը սահմանում եր գյուղացիութայն ստորաբաժանումը մանր, միջակ ու խոշոր գյուղացիութայն, և այս բաժանումը յեվրոպական յերկրներին հսկայական մեծամասնութայն համար այժմ էլ համապատասխանում է իրականութայն: Ենգելսըն ասում եր. «Կարող է պատահել, վոր նույնիսկ խոշոր գյու-

* Նկատի ունի կառուցելու «Die Agrarfrage» գրքի հետևյալ հատվածը շեպիլիթի ս. - դ. յերբինցե իր կողմը թեքի հին ձևով տնտեսավարող գյուղացուն, բայց նա կարող է նրան դնել չեղոք գրութայն մեջ, և սա արդեն խոշոր շահում կլինի: Տնտեսական դարձացում, իհարկե, նրա վրայից առաջ կանցնի, և ս. - դ. կհաղթահարի նրան այնտեղ, վորտեղ նա կկանգնի ս. - դ. հանապարհին. բայց նա դեռևս ներկայացնում է մի ուժ, վորին չպետք է արհամարհել, և յեթե հնարավոր է վերացնել նրա հակազդեցութունը, ապա մոլորութուն կլինի այս բանն աչք-թող անել: (К. Каутский, Аграрный вопрос, Харьков, «Пролетарий», 1926 г. стр. 381): — Խմբ.

դացիութեանը ամենուրեք է, վոր հարկ կլինի բռնութեամբ ճնշելու: Իսկ վոր մենք յերեկոցե կարողանայինք բռնութիւն գործադրել միջակ գյուղացիութեան նկատմամբ (մանրը մեր բարեկամե ե),—այս մասին վոչ մի խելամիտ սոցիալիստ յերեքք էի մտածել: Այսպես եր ասում Մնգելսը 1894 թ., իր մահվանից մի տարի առաջ, յերբ ազգաբային հարցը որվա հերթական հարց դարձավ*): Այս արեսակետը մեզ ցույց ե տալիս այն ճշմարտութիւնը, վոր յերեքմն մողանում են, բայց վորի վերաբերմամբ մենք բոլորս համաձայն ենք թեորիայու: Կալվածատերերի ու կապիտալիստների վերաբերմամբ մեր խնդիրն է՝ լիակատար եքսպրուպրիացիան: Բայց վոչ մի բռնութիւն միջակ գյուղացիութեան վերաբերմամբ մենք քույլ չենք օտար: Նույնիսկ հարուստ գյուղացիութեան վերաբերմամբ մենք այնպիսի վճռականութեամբ, ինչպես բուրժուազիայի վերաբերմամբ, չենք ասում՝ հարուստ գյուղացիութեան ու կուլակների բացարձակ եքսպրուպրիացիա: Մեր ծրագրում այս տարբերութիւնը մտցված ե: Մենք ասում ենք՝ հարուստ գյուղացիութեան դիմադրութեան ճնշում, նրա հակահեղափոխական վտանգութիւնների ճնշում: Սա լիակատար եքսպրուպրիացիա է:

* Մնգելսի «Die Bauernfrage in Frankreich und Deutschland» («Գյուղացիական հարցը Ֆրանսիայում ու Գերմանիայում») հոդվածը, վոր այստեղ վկայակոչում ե Լենինը, լույս աեսավ ազգաբային հարցի շուրջը ծագած տար վեճերի պահին, վորոնք Գերմանական ու գ. կուսակցութեան մեջ ծավալվեցին Ֆրանկֆուրտի պարտայազդից հետո (1894թ. վերջին): Այստեղ բավարացիներ Յոլմարն ու Շենլանկը՝ գյուղացիական ձայներէ հետեից ընկած, ապացուցում եյին, թե անհրաժեշտ ե, վոր սոցիալ դեմոկրատիան նվաճի ուննոր գյուղացիութեանը: Ինչպես հայտնի յե, սըանից քիչ առաջ Ֆրանսիական բանվորական կուսակցութիւնը Նանտի համագումարում (1894թ. սեպտեմբեր) իր ազգաբային պահանջների ձևակերպման մեջ կանգնեց գյուղացիական սեփականութեան ու գյուղացիութեան շահագործող խավերի պաշտպանութեան անսակեակ վրա: Առաջին անգամ «Neue Zeit» ժուռնալում հրատարակված իր հոդվածով Մնգելսը նկատի ունեց ֆրանսիական ու գերմանական սոցիալիստներէ ոպորտունիստական սխալների շահումը, վոր վերջիններս թույլ եյին տվել ազգաբային հարցում: Այնուհետև հոդվածը նույն անվան պակ լույս աեսավ արտնձին բրոշյուրով:

Լենինը նկատի ունի Մնգելսի այս հոդվածի հետեյալ հատվածը. «Մենք

Այն հիմնական տարբերութիւնը, զոր վորոշում է մեր վերաբերմունքը դեպի բուրժուազիան ու դեպի միջակ գյուղացիութիւնը,—բուրժուազիայի լիակատար եքսպրոպրիտցիա, դաշինք ու բիշնեբին շտանգործող միջակ գյուղացիութիւնի հետ,—այս հիմնական դիժը թերութիւն մեջ ընդունում են բոլորը Բայց գործնականում այս գծին հետևում են վոչ-հետևողականորեն, տեղերում դեռևս չեն սովորել հետևել նրան: Յերբ պրոլետարիատը, առաջալիւով բուրժուազիային և ամբացնելով իր իշխանութիւնը, դանազան կողմերից ձեռնամուխ յեղավ նոր հասարակութիւն կերտելու գործին, միջակ գյուղացիութիւնի հարցն առաջ բերվեց առաջին պլանի վրա: Աշխարհում վոչ մի սոցիալիստ չէր բացատում, զոր կոմունիզմի կիրառումը դանազան կերպով կընթանա խոշոր յերկրագործութիւն յերկրներում ու մանր յերկրագործութիւն յերկրներում: Աս ամենատարական, այրբնական ճշմարտութիւն է: Այս ճշմարտութիւնից բղխում է, զոր վորչափով մենք մոտենում ենք կոմունիստական շինարարութիւն խնդիրներին, մեր կենտրոնական ուղադրութիւնը վորոշ չափով պետք է կենտրոնանա հենց միջակ գյուղացիութիւնի վրա:

անտեսական հաստատ համոզումը ունենը, վոր թէ խոշոր, թէ միջակ գյուղացին անխուսափելիորեն պետք է կործանվեն կապիտալիստական տնտեսութիւն ու հացահատիկի անգործկիւնայն կծան արտադրութիւն մրցութիւնից,—ինչպես այս բանն է նշում նաև այս գյուղացիների հարանուն պարտաբեռնվածութիւնն ու ամենուրեք ակներև անկումը: Այս անկման դեմ մենք վոչինչ չենք կարող անել, բացի նրանից, վոր հանձնարարելը այսակզ էլ անտեսութիւնները միացնելու ընկերութիւնների մեջ, վորոնց շըջանում վորձու աշխատանքի շտանգործումը կարող եք ավելի ու ավելի նվազել և վորոնք՝ կարող եյին ստատիւնարաք դառնալ ազգային արտադրողական մեծ ընկերութիւն ճյուղերը՝ հովասար իրավունքներով ու պարտականութիւններով: Յեթև այս գյուղացիք բմբանեն իրենց արտադրութիւն ներկա յեզանակի կործանման անխուսափելիութիւնը և անհրամեշտ յեզրակացութիւններ անեն սրանից, ապա նրանք թող դան մեզ մտ և մեր պարտականութիւնը կլինի մեր ումերի չափով թեթևացնել նաև նրանց անշուք արտադրութիւն նոր ձեթի չախաակ դեղջըում մենք պետք է նրանց թողնենք իրենց սեթական բախտին, և գիմենք նրանց վորձու բանիրներին, վորոնց մեջ մենք, արդեն համակրանք կզանենք: Բոնի եքսպրոպրիտցիայից մենք ամենայն հովանականութիւնք, հետ կկենանք նաև այստեղ, բայց և այնպես պիտի հուսանք, վոր անտեսական գարգացումն ավելի մտաշիլի կզարձնի վողջամտութիւն նաև այս պինդ դուխները:—Եմբ:


Շատ բան կախված է նրանից, թե մենք ինչպես կվորոշենք մեր վերաբերմունքը դեպի միջակ գյուղացիությունը, Թեոթրիպոսայա այս հարցը լուծված է, բայց մենք շատ լավ փորձել ենք, մենք մեզնով գիտենք հարցի թեոթրիպոսայ լուծման՝ և վորոշման պրակտիկ կենսագործման տարբերությունը: Մենք ընդհուպ մոտեցել ենք այս տարբերությանը, վոր այնքան ընորոշ է Յրանսիական Մեծ հեղափոխության համար, յերբ Ֆրանսիական Կոնվենտը լայն միջոցառումներով եր շարժվում, իսկ նրանց գործադրման համար պատշաճ հենարան չունեն, նույնիսկ չգիտեն, թե ինչ դասակարգի վրա պետք է հենվել այս կամ այն միջոցը կիրառելու համար*:

Մենք անչափ ավելի բարեբախտ պայմանների մեջ ենք գտնվում: Մի ամբողջ դարի զարգացման շնորհիվ մենք գիտենք, թե ինչ դասակարգի վրա յենք հենվում: Բայց մենք նմանապես գիտենք և այն, վոր այս դասակարգը շատ ու շատ անբավարար պրակտիկ փորձ ունի: Բանվոր դասակարգի, բանվորական կուսակցության համար հիմնականը պարզ եր՝ տապալել բուրժուազիայի իշխանությունը և իշխանությունը հանձնել բանվորներին: Բայց ի՞նչպես անել այս: Բուրժուազիայի հիշում են, թե ինչ դժվարություններով, ինչքան սխալների միջով մենք արդյունաբերու-

* Նկատի ունի Ֆրանսիական Կոնվենտի քաղաքականությունը այն շրջանում, յերբ նրանից արդեն վտարված եյին ժերոզիկները—առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները—և յերբ գերիշխում եր յակոբինյան դեմոկրատիան (1793 թ. հունիսի 2—1794 թ. հուլիսի 28): Արտաքին ու ներքին հակահեղափոխության դեմ պայքարելիս և Ֆեոդալիզմի վերացման գործում յակոբինյան կոնվենտը ցուցաբերեց հեղափոխական հաստատականություն ու հեռուդակամություն, բայց նրա սոցիալ-անտեսական քաղաքականությունն աչրի յեր ընկնում մանր-բուրժուազիային հատուկ աստանուծներով: 1793—1794 թ. ձմեռվա ընթացքում յակոբինյանը հաստատապես կիրառում են մարսիմոսի քաղաքականություն, արգելում են շուկայի առևտուրը, արտակարգ հարկ են դնում բուրժուազիայի վրա և փորձում են վորոշակի շրջանակներ դնել կապիտալիստական կուտակման համար: 1794 թ. գարնանը նրանք նույնիսկ կանգնում են զհակածելիներին՝ գույքը զհարկավոր պատրիստներին, այսինքն չքավորության մ. շ. և բաժանելու ճանապարհի վրա (վաստողի 8—13-ի դեկրետները): Յեղ միաժամանակ, խոշոր-սեփականատիրական ու կուտակային տարբերի ճնշման տակ նրանք վորոշ չափով մեղմանում են պարենավորման քաղաքականությունը (պարենբանակի վոչնչացումը, կայուն

թյան բանվորական վերահսկողութունից անցանք բանվորական կառավարման Իսկ սա չե՞ վոր մեր կուսակցության ներսի աշխատանքն եր, պրոլետարական միջավայրի ներսի աշխատանքը, միջավայր, վորի հետ մենք մշտապես գործ ենք ունեցել Իսկ այժմ մենք հարկ ենք դրում մեր վերաբերմունքը վորոշելու մի նոր դասակարգի հանդեպ, այն դասակարգի, վորին քաղաքային բանվորը չի նանաչում: Անհրաժեշտ ե վորոշել վերաբերմունքը ղեպի այն դասակարգը, վոր վորոշակի կայուն դրություն չունի: Պրոլետարիատն իր մասսայով կողմնակից ե սոցիալիզմին, բուրժուազիան իր մասսայով դեմ ե սոցիալիզմին,—այս յերկու դասակարգերի փոխնարաբերությունը վորոշելը հեշտ բան ե: Իսկ յերբ մենք անցնում ենք մի այնպիսի խափի, ինչպես միջակ գյուղացիությունն ե, ապա պարզվում ե, վոր սա այնպիսի դասակարգ ե, վորը տեսնվում ե: Նա մասամբ սեփականատեր ե, մասամբ՝ աշխատավոր: Նա չի շահագործում աշխատավորները մյուս ներկայացուցիչներին: Նա տասնամյակներով ստիպված ե յեղել մեծագույն դժվարությամբ պաշտպանել իր դրությունը, նա իր վրա կրել ե կալվածատերերի ու կապիտալիստների շահագործումը, նա կրել ե ամեն ինչ, ե միևնույն ժամանակ նա սեփականատեր ե: Աւստի մեր վերաբերմունքը ղեպի այս տատանվող դասակարգը հրահայական դժվարություններ ե ներկայացնում: Հենվելով մեր ավելի քան մեկ տարվա փորձի վրա, գյուղի մեր ավելի քան մեկուկես տար-

395
գրերի բարձրացումը ե այն): Բանվորական հարցի ընդարձակում յակորինյան Պոնովնաի քաղաքականությունը հակաբանվորական ընույթ եր կրում (գործադուհներն արգելելու վերաբերյալ Շապելյեյի որհնքի պահպանումը, աշխատավորների անբավարար բարձր մարտնում մտցնելը): Յակորինյանը զնախանություն չունեյին խզվելու սեփականատիրական տարրերի հետ ե հենվելու քաղաքային ու գյուղական չքավարության վրա: Ըվերջո նրանք իրենց անհետևողական քաղաքականությամբ իրենց դեմ կանգնեցրին ինչպես նոր բուրժուազիային, վոր հարստացել եր պատերազմի ու հեղափոխության ժամանակ, այնպես ել չքավոր գյուղացիությունը, վորը դժգոհ եր այն բանից, վոր յեկեղեցական ու հմիգրանտական բռնադրաված հողերը գլխավորապես բաժին ել: Նկնում գյուղական ու քաղաքային բուրժուազիային Կոնովնատում աջից ու ձախից Ռոբեսպիերի դեմ մղված պայքարը հանգավ հակահեղափոխական հեղաշրջման ե Ռոբեսպիերի գլխատման): 1794 թվի օգոստոսի 9—10 (նույնի 27—28)—ին—յոմը:.



վա պրոպետարական աշխատանքի վրա, այն բանի վրա, վոր արդեն տեղի յե ունեցել գյուղի դասակարգային շերտավորումը,—մենք այստեղ ամենից ավելի պետք է զգուշանանք շտապելուց, անկարող թեորեսիկությունից, այն բանը պատրաստ համարելու հավակնությունից, ինչ մենք մշակում ենք. ինչ մենք դեռևս չենք մշակել: Բանաձևի մեջ, վորը ձեզ առաջարկում ե սեկցիայի ընտրած հանձնաժողովը, և վորը ձեզ կկարդա հետագա հոստորներից մեկը, այս մասին դուք կգտնեք բավականաչափ նախազգուշացում*:

Տնտեսական տեսակետից պարզ ե, վոր մենք պետք ե ոգնության հասնենք միջակ գյուղացիությանը: Թեորեսպես սրանում վոչ մի տարակույս չկա: Բայց մեր բարքերի պայմաններում, մեր կուլտուրականության մակարդակի, մեր կուլտուրական ու տեխնիկական ուժերի պակասության պայմաններում, ուժեր, վոր մենք կարող եյինք առաջարկել գյուղին, և այն անկարողությամբ, վորով մենք հաճախ մոտենում ենք գյուղին, ընկերները շատ հաճախ հարկադրանք են գործադրում, վորով փչացնում են ամբողջ գործը: Վոչ ավելի առաջ, քան յերեկ մի ընկեր ինձ տվեց մի բրոշյուր, Ռ.Կ.Կ. (բուլղերիկների) Նիժնի Նովգորոդի կոմիտեյի հրատարակությունը, վոր կոչվում ե «հանոնադրություններ ու հրահանգներ կուսակցական աշխատանքը Նիժնի-Նովգորոդի նահանգում կազմակերպելու մասին»,—և այս բրոշյուրում, որինակ, 41 եջում յես կարդում եմ. «Արտակարգ հարկի վերաբերյալ գեկրետն իր ամբողջ ծանրությամբ պետք ե ընկնի գյուղական կուլակներին, սպեկուլյանտներին և առևտարակ գյուղացիության միջակ ատրեբի ուսերին»: Այ սա կարելի յե ասել, վոր մարդիկ «հասկացել են»: Սա կամ վրիպակ ե, բայց անհանդուրժելի յե, վոր այսպիսի վրիպակներ թույլ տրվեն: Սա կամ արագ, հազձ պ աշխատանք ե, վորը ցույց ե տալիս, թե վորքան վտանգավոր ե ամեն մի շտապողություն այս գործում: Կամ այստեղ—սա ամենավատթար յինթադրությունն է վոր յես չեմ ուզում անել Նիժնի Նովգորոդի ընկերների վերաբերյալ:—կամ այստեղ պարզապես գոյություն ու յի անհասկացողություն: Կամ կարող ե պատահել վոր սա ուղղակի թերատեսություն ե:

Իրականութեան մեջ տեղի չեն ունենում այսպիսի դեպքեր
ինչպես մի քնկեր պատմում եր հանձնաժողովում: Նրան ամեն
կողմից շրջապատում են դուրապիք, և յուրաքանչյուրը հարցնում
է. «Վարդիբ, յես միջակ եմ, թե չե՛ս Յես ունեմ յերկու ձի ու
մի կով: Յես ունեմ յերկու կով ու մի ձի» և այլն: Յեղ ահա բո-
լոր զավանները շրջազայոզ այս ազիտատորը պետք է ոժտված
լինի ախպիսի անսխալ շերմաչափով, վորը կարելի լիներ զնել
դուրապուն և ասել, թե նա միջակ է, թե չե՛ս: Սրա համար պետք
է իմանալ այս դուրապու անտեսութեան ամբողջ պատմութեա-
նը, նրա հարաբերութեանը դեպի ստորին ու բարձր խմբերը,—
իսկ այս բանը մենք ճշտութեամբ չենք կարող իմանալ:

Այստեղ հարկաժոր է ահադին պրակտիկ հմտութեան, հար-
կաժոր է իմանալ տեղական պայմանները: Այս բանը մենք զեռ
չունենք: Այս բանը խոստովանելն ամենեկին ամոթ չէ. մենք սա
բացահայտ կերպով պետք է խոստովանենք: Մենք յերբեք ուտո-
պիստներ չենք յեղել և չենք յերեակայել, վոր մենք կոմունիստա-
կան հասարակութեանը պետք է կառուցենք այն մաքուր կոմու-
նիստների մաքուր ձեռքերով, վորոնք պետք է ծնվեն ու դաստիա-
րակվեն մաքուր կոմունիստական հասարակութեան մեջ: Սրանք յե-
րեխայական հեքիաթներ են: Մենք կոմունիզմը պետք է կառուցենք
կապիտալիզմի բեկորներից, և միայն այն դասակարգը կարող է
այս անել, վոր կովոված է կապիտալիզմի դեմ մղած պայքարում:
Պրոլետարիատը,— զուք սա շատ լավ գիտեք,— զուրկ չէ կապի-
տալիստական հասարակութեան թերութեաններից ու թուլու-
թեաններից: Նա պայքարում է սոցիալիզմի համար, և դրա հետ
միասին պայքարում է իր սեփական թերութեանների դեմ: Պրո-
լետարիատի լավագույն առաջավոր մասը, վոր քաղաքներում
տասնյակ տարիներով կատաղի պայքար է մղել, այս պայքարի
ընթացքում կարող եր յուրացնել քաղաքային ու մայրաքաղա-
քային կյանքի ամբողջ կուլտուրան և վորոշ չափով յուրացրել
և Գուք գիտեք, վոր նույնիսկ առաջավոր յերկրներում դուրը
դատապարտված եր խավարի Խհարկէ, դուրը կուլտուրականու-
թեանը մենք կբարձրացնենք, բայց սա յերկար տարիների
գործ է: Ահա, թե մեղ մոտ ամենուրեք ինչն են մոռանում ըն-
կերները և ահա, թե ինչ և առանձին ակնառութեամբ մեր առջև

պատկերում տեղերից յեկած մարդկանց, վոչ այստեղի ինտելիգենտների, վոչ գերատեսչական մարդկանց, — նրանց մենք շատ ենք լսել, — այլ գլուղի աշխատանքը գործնականապես դիտած մարդկանց ամեն մի խոսքը: Ահա այս խոսքերը մեզ համար առանձնապես արժեքավորելին ազդարարային սեկցիայու: Այս խոսքերն առանձնապես արժեքավոր են այժմ, — յես սրանում հավատացած եմ, — կուսակցական ամբողջ համագումարի համար, քանի վոր նրանք վերցրած չեն գրքերից, դեկրետներից, այլ բուն կյանքից:

Այս բոլորը մեզ դրդում է աշխատելու այն իմաստով, վորպեսզի ավելի պարզություն մտցնենք դեպի միջակ գլուղացիությունն ունեցած մեր վերաբերմունքի մեջ:

Սա շատ դժվար է, վորովհետև այս պարզությունը կյանքում չկա: Այս հարցը վոչ միայն չի լուծված, այլև անլուծելի յե, յեթե նրան ուզում են լուծել մեկեմ ու իսկույն ևեք: Կան մարդիկ, վորոնք ասում են. «Չպետք էր այսքան դեկրետներ գրել», — խորհրդային իշխանությանը պախարակում են այն բանի համար, վոր նա ձեռնարկել է դեկրետներ գրելուն, առանց իմանալու, թե ինչպես դրանք կենսագործել: Այս մարդիկ եյապես չեն նկատում: Թե ինչպես են սահում դեպի սպիտակ դվարդիականները: Յեթե մենք սպասելինք, վոր հարյուրավոր դեկրետներ գրելուց կփոփոխվի ամփոփ գլուղական կյանքը, մենք կատարյալ ապուշներ կլինեյինք: Բայց յեթե մենք հրաժարվելինք դեկրետներում ուղին մատնանշելուց՝ մենք սոցիալիզմի դավաճաններ կլինեյինք: Այս դեկրետները, վորոնք գործնականապես չեն կարողացել կիրառվել մեկեն ու լրիվ, մեծ դեր են խաղացել պրոպագանդի համար: Յեթե առաջներում մենք պրոպագանդ եյինք անում ընդհանուր ճշմարտություններով, ապա այժմ մեմ պրոպագանդ եմ անում ափսասանով: Սա նույնպես քարոզ է, բայց սա քարոզ է գործողությամբ — միայն վոչ ինչ — վոր դուրս պրծածների յեզակի գործողությունների մտքով, վորոնց վրա մենք շատ եյինք ծիծաղում անարխիստների ու հին սոցիալիզմի շրջանում: Մեր դեկրետը կոչ է, բայց վոչ նախկին վոզով կոչ, թե «բանվորներ, վոտքի յելեք, տապալեք բուրժուազիային»: Վոչ, սա կոչ է ուղղված մասսաներին, կոչ ուղղված նրանց՝ պրակտիկ գործի համար: Դեկրետները, — դրանք հրահանգներ են, վորոնք կոչ են տնում

զեպի մասսայական պրակտիկ գործ: Ահա, թե ինչն և կարևորը: Թող վոր այդ ղեկըհանների մեջ շատ բան անպետք լինի, շատ ախպիսի բան, վորը կյանքում չի անցնի: Բայց նրանց մեջ նյութ կա պրակտիկ գործի համար, և ղեկըհան խնդիրն այն և, վոր պրակտիկ քայլերի սովորեցնի այն հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր մարդկանց, վորոնք ունկնդրում են խորհրդային իշխանության ձայնին: Սա պրակտիկ գործողության փորձ և դյուզի սոցիալիստական շինարարության բնագավառում: Յեթե մենք այսպես նայելու լինենք, այն ժամանակ մեր սրենքների, ղեկըհանների ու վորոշումների գումարից մենք չափազանց շատ բան կհանենք: Մենք նրանց վրա չենք նայի իբրև բացարձակ վորոշումների, վորոնք պետք է, ինչ ել վոր լինի, անմիջապես, մեկին կիրառել:

Պետք է խուսափել այն բուրբից, ինչ գործնականում կարող է խրախուսել առանձին շարարկումներ: Տեղաեղ մեզ կպել են կարչերխատներ, ավանայուլրիստներ, վորոնք անվանվել են կոմունիստներ և խաբում են մեզ, վորոնք խցկվել են մեր մեջ այն պատճառով, վոր կոմունիստներն այժմ իշխանության ղեկի մոտ են, վոր ավելի ազնիվ «ծառայության մեջ յեղած» տարրերը մեզ մոտ չեկան աշխատելու իրենց հետամնաց գաղափարների հետևանքով, իսկ կարչերխատները վոչ մի սկզբունք, վոչ մի ազնվություն չունեն: Այս մարդիկ, վորոնք ձգտում են միայն քծնելով բարձրանալ, տեղիքում գործի յեն դնում հարկադրանքը և կարծում են, թե սա լավ բան է: Իսկ իրականում սա յերբեմն հանդում է այն բանին, վոր դյուզացիք ասում են. «Կեցցե՛ խորհրդային իշխանությունը, բայց կաշի կոմունիստ» (այսինքն կոմունիզմը): Այսպիսի ղեպքերը մտացածին չեն, այլ վերցրած են կենդանի կյանքից, տեղերի ընկերների հաղորդածներից: Մենք չպետք է մոռանանք, թե ինչ վիթխարի միսամբերում ամեն մի չափազանցություն, ամեն մի շտապողականություն ու հապճեպություն:

Մեզ հարկավոր էր, ինչ ել վոր լինի, շտապել, հանդուգն թոխչի միջոցով դուրս գալ իմպերիալիստական պատերազմից, վորը մեզ հասցրել է փլուզման, հարկավոր էր գործադրել ամենապատասխան ջանքեր՝ ճգմելու համար բուրժուազիային ու այն ուժերին, վորոնք սպառնում էին ճգմել մեզ: Այս ամենը անհրաժեշտ էր,

առանց սրա մենք չեյինք շարող հաղթել Բայց յեթե հենց այսպես գործենք միջակ գյուղացյու- թյուն վերաբերմամբ, — սա այնպիսի իդիոտիզմ կլինի, այնպիսի բթամտություն ու գործի այնպիսի խորտակում, վոր գիտակցաբար այսպես կարող են աշխատել միայն պրովոկատորները: Խնդիրն այստեղ պետք է դրվի միանգամայն այլ կերպ: Այստեղ խոսքը չի վերաբերում այն բանին, վոր ջարդենք անհայտ շահագործողների դիմադրությունը, հաղթենք նրանց ու տապալենք, այսինքն այն խնդիրը, վոր մենք դնում եյինք առջ: Վնչ, վորքան վոր այս գլխավոր խնդիրը մենք լուծել ենք, հերթի յենդրվում ավելի բարդ խնդիրներ: Բռնությամբ այստեղ վոչինչ չես ստեղծի: Միջակ գյուղացիության վերաբերմամբ բռնությունը մեծագույն վնասն է: Սա բազմաքանակ, բազմամիլիոնս խավ է: Նույնիսկ Յեվրոպայում, վորտեղ նա վոչ մի տեղ այսպիսի ուժի չի հասնում, վորտեղ վիթխարի չափով զարգացած է տեխնիկան և կուլտուրան, քաղաքային կյանքը, յերկաթուղիները, վորտեղ ամենից ավելի հեշտ էր այս մասին մտածելը, — վոչ վոք, ամենահեղափոխական սոցիալիստներից և վոչ մեկը բռնի միջոցներ չի առաջարկել միջակ գյուղացիութայն վերաբերմամբ:

Յերբ մենք վերցնում եյինք իշխանությունը, մենք հենվում եյինք ամբողջ գյուղացիութայն վրա: Այն ժամանակ բոլոր գյուղացիք մի խնդիր ունեյին՝ պայքարել կալվածատերերի դեմ: Բայց մինչև այժմ նրանց մեջ կանխակալ համոզում է մնացել խոշոր տնտեսութայն դեմ: Գյուղացին մտածում է. «Յեթե խոշոր տնտեսությունն լինի, կնշանակի յես կրկին բատրակ եմ»: Իհարկե, սա սխալ է: Բայց գյուղացու մեջ խոշոր տնտեսութայն մտապատկերի հետ կապված է ատելությունը, հիշողությունն այն մասին, թե կալվածատերերն ինչպես եյին ճնշում ժողովրդին: Այս զգացմունքը մնում է, դեռ չի մեռել:

Ամենից ավելի մենք պետք է հենվենք այն ճշմարտութայն վրա, վոր այստեղ բռնութայն մեթոդներով գործի բուն եյությամբ վոչինչ չի կարելի ձեռք բերել: Տնտեսական խնդիրն այստեղ միանգամայն այլ կերպ է դրված: Այստեղ չկա այն վերնախավը, վոր կարելի յե կտրել, թողնելով ամբողջ հիմքը, ամբողջ շենքը: Այն վերնախավը, վորպիսին քաղաքում կապիտալիստներն եյին՝ այստեղ չկա: Այստեղ բռնությամբ գործել, մեռնակում է խորակել:

ամբողջ գործը: Այստեղ հարկավոր է անակաճ դաստիարակման աշխատանք: Դյուզաքու՛ն, վորը վոչ միայն մեղ մոտ, ալև ամբողջ աշխարհում գործնական ե ու ունայիտ, մենք պետք ե կոնկրետ որինականեր տանք իրեն ապացույց, վոր «կոմունիան» ամենից լավն ե Իհարկե, վոչ մի ողուտ չի ստացվի, յեթե գյուղում հանգես գան շտապող անխորհուրդ մարդիկ, վորոնք քաղաքից թուկ են այնտեղ, յեկել են, դեպից-դենից խոսել, միջանի ինտելիգենտական, գուցե ե վոչ ինտելիգենտական խառնակչություն սարքել ե դժտված հեռացել: Այսպես լինում ե Հարգանքի փոխարեն նրանք ծաղրանք են հարուցում, ե միանգամայն որինավոր կերպով:

Այս հարցի առթիվ մենք պետք ե ասենք, վոր մենք կոմունաները խրախուսում ենք, բայց նբանք այնպես պետք ե զրգած լինեն, վոր նվաճնն գյուղացու վստահությունը: Իսկ մինչ այդ, մենք գյուղացիներից սովորողներ ենք, ե վոչ թե նրանց ուսուցիչները: Չկա ավելի տխմար բան, քան այն, յերբ մարդիկ, վորոնք ծանոթ չեն գյուղատնտեսությանն ու նրա առանձնահատկություններին, մարդիկ, վորոնք իրենց գուղ են նետել միայն այն պատճառով, վոր նրանք լսել են հասարակական տնտեսության ոգտի մասին, հողնել են քաղաքային կյանքից ե ցանկանում են աշխատել գյուղում,—յերբ այսպիսի մարդիկ ամեն ինչում իրենց համարում են գյուղացիների ուսուցիչներ: Չկա ավելի տխմար բան, քան մվշակ գյուղացու հեծեսական հարաբերությունները ասպարեզում բռնություն գործադրելու նեց միսք:

Մնդիրն այստեղ հանգում ե միջակ գյուղացու վոչ թե եքսպրոպրիացիային, այլ այն բանին, վոր հաշվի առնենք գյուղացու կյանքի հատուկ սլայմանները, այն բանին, վոր գյուղացիներից սովորենք լավագույն հասարակակարգի անցնելու յեղանակները ե չնամաքձակվեմք նրամայի: Ահա այն կանոնը, վոր մենք նշանակել ենք մեղ համար: (Ամբողջ համագումարը ծափահարում ե): Ահա այն կանոնը, վոր մենք աշխատելիք շարագրել բանաձևի մեր նախագծում, վորովհետե այս անսակետից, բնկերներ, մենք հիրավի քիչ սխալներ չենք գործել: Մրա խոստովանումն ամենին ամոթ բան չե: Մենք փորձ չունեյինք: Հենց շտհագործողների դեմ պայքարը մենք կերցրել ենք փորձից: Յե-

թե մեզ յերբեմն դատապարտել են սրա համար, տպա մենք կարող ենք ասել. «Պարոնայք կապիտալիստներ, դուք սրանում մեղավոր եք: Յեթե դուք այսպիսի վայրենի, այսպիսի անմիտ, ստոր ու հուսահատական դիմադրություն ցույց չտայիք, յեթե դուք չդաշնակցեյիք ամբողջ աշխարհի բուրժուազիայի հետ,—հեղաշրջումն ավելի խաղաղ ձևեր կընդունենք: Այժմ ամեն կողմից կատաղորեն յեկող գրոհի առջին առնելով, մենք կարող ենք անցնել ուրիշ մեթոդների, վորովհետև մենք գործում ենք վոչ թե իբրև խմբակ, այլ իբրև կուսակցություն, վոր իր հետևից տանում է միլիոնավոր մարդկանց: Միլիոնավոր մարդիկ չեն կարող մեկնել ըմբռնել կուրսի փոփոխությունը, և ուստի կուլակների համար նախատեսանվող հարվածները միշտ և ամենուրեք հասնում են միջակ գյուղացուն: Սա զարմանալի չէ: Պետք է միայն հասկանալ, վոր սա հետևանք է պատմական պայմանների, վորոնք վերացված են, և վոր նոր պայմաններն ու նոր խնդիրները այս դասակարգի վերաբերմամբ պահանջում են նոր հոգեբանություն:

Գյուղացիական տնտեսության վերաբերմամբ մեր դեկրետները հիմնականում ճիշտ են: Մենք նրանցից վոչ մեկից հիմք չուեննք հրաժարվելու, վորևե մեկի նկատմամբ ավաստալու: Իսկ յեթե դեկրետները ճիշտ են, ապա սխալ բան է դրանք ուժով փաթաթել գյուղացու վզին: Վոչ մի դեկրետում այս մասին չի ասված: Նրանք ճիշտ են, իբրև նշված ուղիներ, իբրև պրակտիկ ձեռնարկումների կոչ: Յերբ մենք ասում ենք՝ «Խրախուսեք միավորումը»,—մենք դիրեկտիվներ ենք տալիս, վորոնք շատ անգամ պետք է փորձվեն, վորպեսզի գտնենք նրանց գործադրման վերջնական ձևը: Քանի վոր ասված է, թե անհրաժեշտ է ձգտել հասնելու կամավոր համաձայնության, նշանակում է հարկավոր է գյուղացուն համոզել և հարկավորե գործնականապես համոզել: Խոսքով նրանք չեն համոզվի և շատ լավ կանեն, վոր չեն համոզվի: Վատ կլինեն, յեթե նրանք համոզվեյին միայն կարգալով դեկրետներ ու ազիտացիոն թերթիկներ: Յեթե այսպես կարելի լիներ տնտեսական կյանքը վերափոխել, այս ամբողջ վերափոխությունը մի կտորված գրոշ չեր արժենա: Նախ պետք է ապացուցել, վոր այսպիսի միավորումն ավելի լավ է, մարդկանց միա-, վորևլ այնպես, վոր նրանք իրոք միավորվեն, և վո թե գծովեն

ապացուցել, Վոր սա ձեռնառու յի: Հարցն այսպես և զնուս
դյուղացին, և այսպես են զնուս հարցը մեր ղեկրեաները: Յեթն
մենք մինչև այժմ չենք կարողացել հասնել այս բանին, սրանուս
վոչ մի ամօթալի բան չկա, մենք սա բացահայտ կերպով պետք
և խոստովանենք:

Մենք առայժմ լուծել ենք ամեն մի սոցիալիստական հե-
ղաշրջման համար հիմնական հանդիսացող խնդիրը միայն՝ բուր-
ժուսագիտյան հողթելու խնդիրը: Այս խնդիրը հիմնականում մենք
լուծել ենք, թեև այժմ սկսվում և սարսափելի դժգոհին մի կի-
սամյակ, յերբ ամբողջ աշխարհի իմպերիալիստները վերջին ջանքե-
րն են թափում մեզ նկատելու համար: Ամենեին չչափազանցելով,
մենք այժմ կարող ենք ասել, Վոր նրանք իրենք հասկացել են,
վեր այս կիսամյակից հետո նրանց բունք բացարձակապես անհու-
սալի յե: Կամ նրանք այժմ կողտվեն մեր հյուժվածությունից և
կհաղթեն մի յերկրի, կամ մենք հաղթողներ կհանդիսանանք Վոչ
միմիայն մեր յերկրի նկատմամբ: Այս կիսամյակին, յերբ պա-
րենավորման ու արանսպորտային ճգնաժամերը կուտակվել են և
իմպերիալիստական պետութայունները փորձում են հարձակվել
միջանի ուղղաճակատից, մեր դրությունը չափազանց ծանր և:
Բայց սա վերջին ծանր կիսամյակն և: Անհրաժեշտ և առաջվա
նման լարել բոլոր ջանքերը՝ պայքարելու արատքին թշնամու
զեմ, Վորը հարձակվում և մեզ վրա:

Բայց յերբ մենք խոսում ենք գյուղական աշխատանքի
խնդիրների մասին, մենք պետք և, չնայած բոլոր դժգոհու-
թյուններին, չնայած այն բանին, Վոր մեր ամբողջ փորձը
ուղղված և դեպի շահագործողներին անմիջական ճնշումը,—մենք
պետք և հիշենք ու չմոռանանք, Վոր գյուղում միջակ գյուղա-
ցիության վերաբերմամբ խնդիրներն այլ կերպ են դրված:

Բոլոր դիտակից բանվորները, ինչպես, որ. Պիտերի, Իվանով-
Վոդնեսենսկի, Մոսկվայի բանվորները, վորոնք յեղել են գյուղում,—
բոլորն ևլ մեզ որինակներ եյին պատմում, թե ինչպես մի
ամբողջ շարք կարծես թե ամենից անվերացնելի թյուրլուծացու-
թյուններ, մի ամբողջ շարք կարծես թե ամենից մեծ կոնֆլիկտ-
ներ վերացվել ու թուլացվել են նրանով, Վոր հանդես են յեղել
բանվորներ, վորոնք խոսել են Վոչ թե զբքերից, այլ գյուղացուն

հասկանալի լեզվով, խոսել է՝ վոչ թե իբրև հրամանատարներ, վորոնք իրենց թույլ են տալիս հրամաններ ալ չակելու, ընկերանք գյուղական կյանքը չզրտեն, այլ իբրև ընկերներ, վորոնք պարզաբանում են դրությունը, կոչ են անում աշխատավորներին նրանց զգացմունքին ընդդեմ շահագործողներին: Յեւ ընկերական պարզաբանման այս հողի վրա ձեռք ե բերվել այն, ինչի չեյին կարող հասնել հարյուրավոր ուրիշ մարդիկ, վորոնք իրենց պահել են իբրև հրամանատարներ ու պետեր:

Ահա թե ինչ վոգով ե համակված այն ամբողջ բանաձևը, վոր մենք այժմ առաջարկում ենք ձեր ուշադրությանը:

Իմ համառոտ գեկուցման մեջ յես փորձեցի կանգ տունել այս բանաձևի սկզբունքային կողմի, ընդհանուր քաղաքական նշանակության վրա: Յես փորձեցի ապացուցել, — և յես ուղում եմ կարծել, վոր ինձ հաջողվեց ապացուցել, — վոր ամբողջ բանաձևի շահերի տեսակետից մեզ մոտ վորևե շրջադարձ չկա, դժի վորևե փոփոխություն չկա: Մյլիտակ-գվարդիականներն ու նրանց սգնականները ճշում են այս մասին և պետք ե ճշան: Թող ճշան: Սա մեզ չի հուզում: Մենք ամենահետևողական կերպով դարգացնում ենք մեր խնդիրները: Մեզ անհրաժեշտ ե մեր ուշադրությունը բուրժուազիային ճնշելու խնդրից փոխադրել միջակ գյուղացության կյանքը կառուցելու խնդրի վրա: Մենք պետք ե նրա հետ հաշտ ապրենք: Կոմունիստական հասարակության մեջ միջակ գյուղացիությունը միայն այն ժամանակ մեր կողմը կլինի, յերբ մենք թեթևացնենք ու բարելավենք նրա կյանքի տնտեսական պայմանները: Յեթե մենք վաղը կարողանայինք տալ 100 հազար առաջնակարգ տրակտոր, նրանց մատակարարել բնիզին, նրանց մատակարարել մեքենավարներ (դուք շատ լավ գիտեք, վոր առայժմ սա Ֆանտազիա յե), ապա միջակ գյուղացին կասեր. «Յես կոմունիստի կողմնակից եմ» (այսինքն կոմունիզմի կողմնակից): Բայց սա անելու համար նախ պետք ե հաղթել միջազգային բուրժուազիային, պետք ե ստիպել նրան, վոր նա մեզ տա այդ տրակտորները, և կամ մեր արտադրողականությունն այնքան պետք ե բարձրացնել, վոր մենք ինքներս կարողանանք դրանք պատրաստել: Միայն այսպես ճիշտ դրված կլինի այս հարցը:

Գյուղացին զգում ե քաղաքի արդյունաբերութան կարիքը:

տանց նրան նա չի կարող ապրել, իսկ արդյունաբերութունը մեր ձեռքին և Յեթն մենք գործին գիմենք. շատ կերպով, այն ժամանակ գյուղացին մեզնից շնորհակալ կլինի, վոր մենք քաղաքից տանենք այդ արդյունքները, այդ գործիքները, այդ կուլտուրան: Իրանք գյուղացու համար կտանեն լույ թե շահագործողները, լույ թե կալվածատերերը, այլ հենց այնպիսի աշխատավոր ընկերներ, վորոնց նա գնահատում և հափազանց խորապես, բայց գնահատում և գործնականապես, գնահատում և միայն նրանց փաստական ոգնութունը, մերժելով — և միանգամայն իրավացի կերպով մերժելով — հրամայումը, վերևից շնորհանդուժը:

Նախ ոգնեցեք, ապա վստահութուն ձեռք բերեք: Յեթն այս գործը ճիշտ կատարվի, յեթն մեր յուրաքանչյուր խմբակի ամեն մի քայլը ճիշտ զբվի դավառում, վոլոստում, պարենավորման ջոկատում, ամեն մի կազմակերպության մեջ, յեթն մեր յուրաքանչյուր քայլը ուշադրությամբ ստուգվի այս տեսակետից՝ մենք կնվաճենք գյուղացու վստահութունը և միայն այն ժամանակ կարող ենք առաջ գնալ: Այժմ մենք նրան ոգնութուն պիտի տանք, խորհուրդ պիտի տանք: Սա հրամանատարի հրաման չի լինի, այլ ընկերոջ խորհուրդ: Այն ժամանակ գյուղացին պարզ շովին մեր կողմը կլինի:

Ահա, ընկերներ, թե ինչ և պարունակում մեր բանաձևը, ահա, թե իմ կարծիքով ինչ պիտի լինի համազումարի վորոշումը: Յեթն մենք սա ընդունենք, յեթն սա վորոշի մեր կուսակցական կազմակերպությունների ամբողջ աշխատանքը, այն ժամանակ մենք կհաղթահարենք նաև մեր առջև դրված յերկրորդ մեծ խնդիրը:

Թե ինչպես առաջադիճբուրժուազիային, ինչպես նրան ճնշել այս մենք սովորել ենք և սրանով հպարտանում ենք: Թե ինչպես կարգավորել հարաբերությունները միլիոնավոր միջակ գյուղացիության հետ, ինչ ճանապարհով նվաճել նրա վստահութունը՝ սա մենք դեռ չենք սովորել, — սա պետք և ասել բացորոշ: Բայց մենք խնդիրն ըմբռնել ենք, մենք այն զրել ենք և մենք ամբողջ հույսով, ամբողջ խնայութամբ և ամբողջ վճարակասությամբ մեզ ասում ենք. այս խնդիրը մենք կհաղթահարենք, և այն ժամանակ սոցիալիզմը բացարձակապես անպարտելի կլինի (Յերկարակ ծախի):

ԹԿ (Բ)Կ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԿՈՄԻՏԵՑԻ ՏՎԱԾԻ ՀԱՂՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(1919 թ. ՄԱՐՏԻ 18)

ՀԱՏՎԱԾ

... Ինչ վերաբերում է մանր-բուրժուական տարրերին ապա այստեղ կուսակցության խնդիրը դեռ վերջնականապես չի լուծված: Որակարգի մի ամբողջ շարք հարցերում, ըստ եյուլթյան բոլոր հարցերում առանց բացառության, մենք նախընթաց տարում հիմք ենք ստեղծել այս խնդիրը ճիշտ լուծելու համար, առանձնապես միջակ գյուղացու վերաբերմամբ: Տեսականորեն մենք համաձայնության չենք, վոր միջակ գյուղացին մեր թշնամին չէ, վոր նա հատուկ վերաբերմունք է պահանջում իրեն, վոր այստեղ բանը կփոխվի՝ նայած հեղափոխության բազմաթիվ առանկալ մոմենտներին, մասնավորապես այն կապակցությամբ, թե հարցը կլուծվի հոգուտ պատրիոտիզմի, թե՞ ընդեմ պատրիոտիզմի: Մեզ համար սրանք յերկրորդական կամ նույնիսկ յերրորդական հարցեր են, բայց սրանք մանր բուրժուազիային բացարձակապես 'կուրաց' նում են: Մյուս կողմից՝ այս բոլոր տարրերը առատանվում են պայքարի մեջ և դառնում միանգամայն կամադուրկ: Նրանք չգիտեն, թե ինչ են ուզում, և ընդունակ չեն պաշտպանելու իրենց դրությունը: Այստեղ մեղմից պահանջվում է չափազանց ճկուն, չափազանց զգուշ տակտիկա, վորովհետև յերբեմն հարկ է լինում մի ձեռքով տալ և մյուսով վերցնել: Սրա մեղքն ընկնում է վոչ թե մեզ վրա, այլ այն մանր-բուրժուական տարրերի, վորոնք չեն կարողանում հավաքել իրենց ուժերը: Այս բանը մենք այժմ տեսնում ենք գործնականում, և դեռ այսօր մենք առիթ ունեցանք

լրագրերում կարգալու, թե ինչի յեն սկսել ձգտել գերմանական
տնկախները, վորոնք ունեն այնպիսի խոշոր ուժեր, ինչպես
կառուցկին և Հիլֆերդինգը Գուք գիտեք, վոր նրանք ուզում եյին
Խորհուրդների սխտեմը մտցնել Գերմանական դեմոկրատական
հանրապետութեան սահմանադրութեան մեջ, այսինքն որինտեկան
ածուանութեամբ զուգակցել «ուչրեդիլկան» ու պրոլետարիատի
գիկտատութեան Մեղ համար սա այնպիսի ծագրանք ե մեր հեղա-
փոխութեան, գերմանական հեղափոխութեան, հունգարական հե-
ղափոխութեան, լեհական հասունացող հերափոխութեան առողջ
մտքի նկատմամբ, վոր մենք միայն տարակուսել կարող ենք:
Մենք կարող ենք տեսել, վոր այնպիսի տատանվող տարրեր կան
ամենատառաջավոր յերկրներում: Յերբեմն կրթված, զարգացած ին-
տելիգենտ տարրեր հանդես են գալիս նույնիսկ այնպիսի կապի-
տալիստական առաջավոր յերկրում, ինչպես Գերմանիան և, հա-
րյուր անգամ ավելի շիտթամիտ ու շղկան ձևով, քան մեր հե-
տամնաց մանր բուրժուազիան: Այստեղից դաս պիտի վերցնել
Ռուսաստանի համար մանր-բուրժուական կուսակցութունների
ու միջակ գյուղացիութեան վերաբերմամբ: Մեր խնդիրը յերկար
ժամանակ բարդ կլինի ու յերկակի: Այս կուսակցութունները
յերկար ժամանակ անխուսափելիորեն մի քայլ պիտի անեն առաջ,
յերկու քայլ՝ հետ, վորովհետև իրենց տնտեսական դրութեամբ
նրանք զատապարտված են դրան, վորովհետև նրանք սոցիալիզմի
հետեից կդնան ամենին վոչ այն բացարձակ համոզման ուժով,
վոր բուրժուական հասարակակարգն անպետք և Սոցիալիզմին
նվիրվածութուն նրանցից պահանջել անգամ չարժե նրանց՝ սո-
ցիալիզմի վրա հույս դնելը ծիծաղելի յի նրանք սոցիալիզմի
հետեից կդնան միայն այն ժամանակ, յերբ կհամոզվեն, վոր
վորեև այլ ուղի չկա, յերբ բուրժուազիան վերջնականապես
կջախջախվի ու կհնչվի:

Յես հնարափորութեուն չունեմ սխտեմատիկ կերպով ամփո-
փելու նախընթաց տարվա փորձը, յես անցյալի վրա հետ նայեցի
միայն այն տեսակետից, թե վաղը կամ մյուս որը ինչ պետք
կլինի մեր քաղաքականութեան համար: Գլխավոր դասն և՛ չա-
փաղանց զուշ լինել մեր վերաբերմունքի մեջ դեպի միջակ գյու-
ղացիութունն ու մանր բուրժուազիան: Այս և պահանջում անցյա-

չի փորձը, այս ենք մենք ապրել Բրեստի որինտակով: Մեզնից կապահանջվի շատ հաճախ փոփոխել մեր վարքագիծը, վոր մակերեսային դիտողի համար կարող և թվալ տարրորինակ ու անհասկանալի: «Ի՞նչպես թե, — կասի նա, — յերեկ մենք խոստումներ ելինք աալիս մանր բուրժուազիային, իսկ այսօր Ձերժինսկին հայտարարում ե, թե ձախ եսերներն ու մենշեիկները պիտի գնդակահարվեն: Ի՞նչ հակասութուն... »: Այո, հակասութուն: Բայց հակասական ե հենց մանր-բուրժուական դեմոկրատիայի վարմունքը, վորը չգիտե, թե վորտեղ նստի, փորձում և նստել յերկու աթոռների միջև, մեկից ցատկում ե մյուսի վրա և ընկնում մերթ աջ, մերթ՝ ձախ: Նրա նկատմամբ մենք փոխել ենք մեր տակտիկան, և ամեն անգամ, յերբ նա դառնում ե դեպի մեզ, մենք նրան ասում ենք. «Շնորհ բերեք»: Մենք ամհնեին չենք ուզում * եքապրոպրիացիայի յենթարկել միջակ գյուղացիութայնը, մենք բնավ չենք ցանկանում բռնութուն գործադրել մանր-բուրժուական դեմոկրատիայի նկատմամբ: Մենք նրան ասում ենք. «Դուք լուրջ թշնամի չեք: Մեր թշնամին բուրժուազիան ե: Իսկ յեթե դուք հանդես եք գալիս նրա հետ միասին, այն ժամանակ մենք հարկադրված ենք ձեր հանդեպ կիրառելու պրոլետարական դիկտատուրայի միջոցները... »

Յես կուզեյի համառոտակի շոշափել նաև պարենավորման հարցն ու գյուղի հարցը: Պարենավորման հարցը մեզ մոտ մշտապես յեղել ե ամենադժվարին հարցը: Մի յերկրում, վորտեղ պրոլետարիատը հարկ զգաց իշխանութունը վերցնելու գյուղացիութայն ոգնությամբ, վորտեղ պրոլետարիատին ընկավ մանր-բուրժուական հեղափոխութայն գործակալի դերը, — մի հեղափոխութունը մինչև չքավորութայն կոմիտեների կազմակերպումը, այսինքն՝ մինչև 1918 թ. ամառը և նույնիսկ աշունը, նշանակելի չափով բուրժուական հեղափոխութուն եր: Մենք չենք վախնում այս ասելուց: Մենք այնպես հեշտ կատարեցինք Հոկտեմբերյան հեղափոխութունն այն պատճառով, վոր գյուղացիութունն ամբողջությամբ գալիս եր մեզ հետ, այն պատճառով, նոր նա գնում եր կալվածատերների դեմ, այն պատճառով, վոր նա տես-

* Սղազության մեջ ասված ե. Մենք հավանութուն չունենք — յոմբ:

նում եր, վոր այստեղ մենք կզնանք մինչև վերջ, այն պատճառով, վոր մենք որենքների ձեռով իրագործում ենք այն, ինչ ապագրված եր հսկողական լրագրերում, — այն, ինչ յերկշուտ մանր բուրժուազիան խոստանում եր, բայց վորն անել չեր կարողանում: Բայց յերբ սկսեցին կազմակերպվել չքավորութայն կոմիտեներ, այդ մոմենտից մեր հեղափոխութունը դարձավ պրոլետարիան հեղափոխութուն: Մեր առջև ծագացավ մի խնդիր, վորը մենք դեռ ամենևին չենք լուծել: Բայց չափազանց կարևոր ե այն, վոր մենք այս խնդիրը գործնականապես դրել ենք: Չքավորութայն կոմիտեները անցումային աստիճան եյին: Չքավորութայն կոմիտեները կազմակերպելու վերաբերյալ առաջին դեկրետը խորհրդային իշխանութունն անցկացրեց ընկ. Յուրուպայի նախաձեռնությամբ, վորն այն ժամանակ պարենավորման գործի գլուխ եր կանգնած: Հարկավոր եր փրկել կործանումից վոչ-յերկրագործ բնակչութունը, վոր մորմաքվում եր սովի տանջանքներից: Այս հնարավոր եր անել միայն չքավորութայն կոմիտեների միջոցով՝ իբրև պրոլետարիան կազմակերպութունների: Յեզ յերբ մենք տեսանք, վոր 1918 թ. ամառը դյուղում սկսվեց ու տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխութունը, միայն այն ժամանակ մենք կանգնեցինք մեր խսկական պրոլետարական պատվանդանի վրա, միայն այն ժամանակ մեր հեղափոխութունը վոչ թե թռուցիկներով, վոչ թե խոսառմներով ու հայտարարութուններով, այլ իրականում դարձավ պրոլետարիան հեղափոխություն:

Մենք այժմ դեռևս չենք լուծել մեր կուսակցության առջև դրված խնդիրը՝ պարզել պրոլետարիատի ու կիսապրոլետարիատի կազմակերպման ձևերը ստեղծելու խնդիրը: Նորերս յես առիթ ունեցա լինելու Պետրոպոլսում և ներկա գտնվելու Պետրոպոլսի նահանգի գյուղատնտեսական բանվորների առաջին համագումարներից մեկում*: Յես տեսա, թե ի՞նչպես մենք դեռ շոշափելով ենք մոտենում այս գործին, բայց յես կարծում եմ, վոր նա անտարակույս առաջ կմղվի: Յես պետք ե ասեմ, վոր այն զլխավոր փորձառությունը, վոր այս տարի մեզ տվեց քաղաքական դեկավորութունը, այն ե, վոր այստեղ մենք գանենք կազմակերպչա-

* Տես Լենինի յերկեր, XIV հ., 3-րդ և 3-րդ հրատ, եջ 38 — 41 — 70-րդ:

կան հենարան: Մենք մի քայլ ենք կատարել դեպի սա, կազմելով չքավորութեան կոմիտեաներ, վերընտրելով խորհուրդներ և վերահասուցելով պարենավորման քաղաքականութիւնը, վորտեղ հանգիստում եյին անհավատալի դժվարութիւններ: Թերևս Ռուսաստանի այն ծայրագավառներում, վորոնք այժմ դառնում են խորհրդային, — Ուկրայինա, Դոն, — հարկ կլինի ձևափոխել այս քաղաքականութիւնը: Միայն կլինել, յետք մենք ուղղակի շարունով դեկրետներն ընդորինակեյինք Ռուսաստանի բոլոր վայրերի համար, յետք բոլշևիկ-կոմունիստները, Ուկրայինայի ու Դոնի խորհրդային աշխատողները սկսեյին անխտիր, առանց հիմքի դրանք տարածել ուրիշ մարզերի վրա: Քիչ յուրատեսակութիւն հարկ չի լինի ապրել, մենք մեզ վոչ մի դեպքում չենք կաշկանդում միատեսակ շարունով, մեկընդմիջ չենք վճռում, վոր մեր փորձը, Կենտրոնական Ռուսաստանի փորձը կարելի յե ամբողջութեամբ փոխադրել բոլոր ծայրագավառները: Մենք միայն նոր ենք մտտեցել իսկական շինարարութեան խնդրին, մենք միայն նոր ենք առաջին քայլերն անում այս տեսակետից, — մեր առջև բացվում ե աշխատանքի անընդգրկելի դաշտ:

Յես նշեցի, վոր խորհրդային իշխանութեան առաջին վճռական քայլը չքավորութեան կոմիտեաների կազմակերպումն եր: Սա կատարեցին պարենավորման աշխատողները, և հետևանք եր անհրաժեշտութեան: Բայց մեր խնդիրները մինչև վերջ հասցնելու համար այնպիսի ժամանակավոր կազմակերպութիւններ չեն հարկավոր, ինչպես չքավորութեան կոմիտեաները: Մեզ մոտ խորհուրդներին զուգընթաց գոյութիւն ունեն արհեստակցական կազմակերպութիւններ, վորոնք մենք ոգտագործում ենք՝ իբրև հետադասաց մասսաների դաստիարակման դպրոց: Այն բանվորների շերտը, վորոնք այս տարի փաստորեն կառավարում եյին Ռուսաստանը և կիրառում ամբողջ քաղաքականութիւնը, վորոնք կազմում եյին մեր ուժը, — Ռուսաստանում այս շերտը անհավատալիորեն բարակ ե: Սրանում մենք համոզվել ենք, սա մենք զգում ենք մեզ վրա: Յետք լերեկիցե ազագա պատմութիւնը տվայնեք հավաքի այն մասին, թե ինչ խմբակներ են կառավարել Ռուսաստանում այս 17 ամսում, մարդկանց ինչ հարյուրյակներ, հազարներ են իրենց վրա կրել այս ամբողջ աշխատանքը, իրենց վրա կրել

յերկրի կառավարման վողջ անհավատալի ծանրութիւնը, — վող
վող չի հավատա, վոր կարելի յեր այս անել այսպիսի աննշան
քանակութեան ուժերով: Այս քանակն աննշան է այն պատճառով,
վոր Ռուսաստանում ինտելիդենտ, կրթված, ընդունակ քաղաքա-
կան ղեկավարները վողքրաթիվ են յեղել: Ռուսաստանում այս
խաղը բարակ է յեղել և նախընթաց պայքարի միջոցին կարը-
վել է, զերաշխատել է, արել է ավելին, քան կարող էր: Յևս կար-
ծում եմ, վոր ներկա համազումարում մենք գործնական միջոցներ
տրտի վորոնենք, թե ինչպես արդյունարեւութեան մեջ և —
վոր ավելի կարեոր է — գլուղում մասսայական մասշտաբով ոգտա-
գործենք նորանոր ուժերը, ինչպես խորհրդային աշխատանքի
մեջ ներգրավենք՝ միջակի մակարդակին և այս մակարդակից ել
նունիսկ ջածր կանգնած բանվորներին ու գյուղացիներին: Առանց
մասսայական մասշտաբով նրանց ողնութեան, հետագա գործու-
նեյութեանը, մեր կարծիքով, անկարելի յի:

Վորովհետեւ իմ ժամանակը համարյա լրացավ, յես միայն
միքանի խոսք եմ ուղում ասել մեր վերաբերմունքի մասին դեպի
միջակ գյուղացիութիւնը: Մեր վերաբերմունքը դեպի նա մեզ հա-
մար սկզբունքով պարզ երնակ հեղափոխութեան սկզբնավորութեան
նից առաջ: Գյուղացիութեան չեզոքացման խնդիրը գրված էր մեր
առջև: Մոսկվայի մի ժողովում, վորտեղ առիթ յեղավ հարց դնելու
ժանր-բուժուական կուսակցութեան ների հանդեպ ունենալիք
վերաբերմունքի մասին, յես հիշատակեցի Ենգելի մշտրտ խոս-
քերը, վոր վող միայն նշում էր, վոր միջակ գյուղացիութիւնը
մեր դաշնակիցն է, այլև նույնիսկ վստահութիւն էր հայտնում,
վոր թերևս հաջողվի առանց հալածանքների, առանց ճնշման մի-
ջոցների կառավարվել նաև խոշոր գյուղացիութեան վերաբերմամբ *:
Ռուսաստանում այս յենթադրութեանը չարդարացավ: մենք կանգ-
նած եյինք կուլակների դեմ ուղղակի քաղաքացիական կռիվ մղե-
լու տեսակետի վրա, կանգնում ենք և պետք է կանգնենք: Սա
անխուսափելի յի: Մենք սա տեսանք գործնականում: Բայց
ամենուրեք, խորհրդային աշխատողների անփութութեան պատճա-

* Յես 1/ն/նի յերկեր, XXIII հ. 2-րդ և 3-րդ ուղ. հրատ. էջ 505 — 323:
— 708 —

ուվ, հարցի դժվարութեան պատճառով կուլակներէ համար նա-
խատեսված հարվածներն ընկան միջակ գյուղացիութեան վրա:
Այստեղ մենք չափազանց շատ մեղանչեցինք: Այս տեսակետից
ձեռք բերված փորձառութիւնը կողնի մեզ ամեն ինչ անելու,
վորպեսզի սրանից խուսափենք հետագայում: Ահա այն խնդիրը,
վոր դրված եմեր առջև վոչ թե տեսականորեն, այլ գործնականապես:
Դուք շատ լավ գիտեք, վոր այս խնդիրը դժվարին խնդիր ե:
Մենք չունենք այնպիսի բարիքներ, վոր մենք կարողանայինք
տալ միջակ գյուղացիութեանը, իսկ նա մատերիալիստ ե, գործնա-
կան և պահանջում ե կոնկրետ նյութական բարիքներ, վոր մենք
այժմ չենք կարող տալ և առանց վորոնց յերկիրը դեռևս պետք
ե կառավարվի ծանր պայքարի թերևս ամիսներ, պայքար, վոր
այժմ խոստանում ե լիակատար հաղթանակ: Բայց մենք շատ
բան կարող ենք անել մեր վարչական պրակտիկայում: Բարելավել
մեր ապարատը, ուղղել բազմաթիվ չարարկումներ: Մենք կարող
ենք մեր կուսակցութեան գիծը, վոր բավականաչափ չեր ընթա-
նում դեպի բլոկ, դեպի դաշինք, դեպի համաձայնութիւն միջակ
գյուղացիութեան հետ, — մենք այս գիծը կարող ենք և պետք ե
ուղղենք ու շտկենք...

Յերկիր, XXIV հ., 2-րդ և 3-րդ
ուսու. հրատ., էջ 119 — 127:

ԲԵՆԵՔԵՎ ՄԻՋԵԿ ԳՅՈՒՂ ԱՅԻՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԵՐԵՐՎԵԼՈՒ ՄԸՄԻՆ*

VIII համազումարը գյուղում աշխատելու հարցի առթիվ կանդնած լինելով 1919 թ. մարտի 22-ին ընդունված կուսակցական ծրագրի հոդի վրա և ամբողջութամբ պաշտպանելով խորհրդային իշխանութան արդեն անցկացրած որենքը սոցիալիստական հողաշինարարութան և դեպի սոցիալիստական յերկրագործություն տանող անցումային միջոցների մասին, ընդունում ե, վոր ներկա մամենտին առանձին կարևոր նշանակություն ունի կուսակցական գծի ավելի ճիշտ կիրառումը միջակ գյուղացիության վերաբերմամբ՝ նրա կարիքներին ավելի ուշադիր վերաբերվելու, տեղական իշխանությունների կամայտականությունը վերացնելու և նրա հետ համաձայնության զալուն ձգտելու իմաստով:

1) Միջակ գյուղացիներին շիտթել կուլակության հետ, նրանց վրա այս կամ այն չափով տարածել կուլակության դեմ ուղղված միջոցները, նշանակում և ամենակողմից կերպով խախտել խորհրդային իշխանության վոչ միայն բոլոր դեկրետները և նրա ամբողջ քաղաքականությունը, այլև կոմունիզմի բոլոր հիմնական սկզբունքները, վորոնք բուրժուազիայի տապալման համար պրոլետարիատի մղած մճոական պայքարի շրջանում մատնացույց են անում պրոլետարիատի համաձայնությունը միջակ գյուղացիության հետ, իբրև դեպի ամեն տեսակ շահագործում վերացնելուն անհիվանդագին կերպով անցնելու պայմաններից մեկը:

2) Միջակ գյուղացիությունը, վոր նույնիսկ առաջավոր կապիտալիստական յերկրներում գյուղատնտեսական տեսնի-

* Բանաձևն ընդունել և Ռի(ք)ի VIII համազումարը Գրել և Վ. Ի. Լե-նինը—յմբռ.:

կայի՝ արդյունաբերական տեխնիկայից հետ մնալու հետևանքով, չխոսելով արդեն Ռուսաստանի մասին, տնտեսական համեմատաբար ամուր արմատներ ունի, բավական յերկար ժամանակ կպահպանվի պրոլետարական հեղափոխութեան սկզբնավորութեանից հետո: Ուստի գյուղի խորհրդային աշխատողներին, հավասարապես և կուսակցութեան գործիչներին տակախկոն պետք է նկատի առնել միջակ գյուղացիութեան հետ յերկար ժամանակ համազոր-ծակցելու համար:

3) Կուսակցութեանը պետք է ինչ ել վոր լինի հասնի այն բանին, վոր գյուղի խորհրդային բոլոր աշխատողները կատարելապես պարզեն իրենց համար և հաստատապես գիտակցեն գիտական սոցիալիզմի լիովին հաստատած այն ճշմարտութեանը, վոր միջակ գյուղացիութեանը չի պատկանում շահագործողներին, վոր ըովհետև ուրիշի աշխատանքից շահույթ չի ստանում, մանր արգադրողներին այսպիսի դասակարգը կորուստ չի ունենա սոցիալիզմից, այլ, ընդհակառակը, շատ մեծ նպիւրով կշահվի կապիտալի լուծը տապալելուց, վորն ամեն մի, նույնիսկ ամենադեմոկրատական հանրապետութեան մեջ նրան շահագործում է հազարավոր յեղանակներով:

Այսպիսով, խորհրդային իշխանութեան միանգամայն ճիշտ քաղաքականութեանը գյուղում ապահովում է հաղթական պրոլետարիատի դաշինքն ու համաձայնութեանը միջակ գյուղացիութեան հետ:

4) Խրախուսելով միջակ գյուղացիներին ամեն տեսակ ընկերութեանները, հավասարապես և գյուղատնտեսական կոոպերատիւնները, խորհրդային իշխանութեան ներկայացուցիչներն ամենաչնչին իսկ հարկադրանք չպիտի թույլ տան դրանք ստեղծելիս: Արժեքավոր են միայն այն միավորութեանները, վոր իրագործել են գյուղացիներն իրենք՝ իրենց ազատ նախաձեռնութեամբ և վորոնց ոգուտը նրանք ստուգել են փորձով: Չափազանց հապճեպութեանը մնասակար է այս գործում, վորովհետև նա ընդունակ է միայն ուժեղացնելու միջակ գյուղացիութեան կանխակալ համոզումը նորմուծութեաններին դեմ:

Խորհրդային իշխանութեան այն ներկայացուցիչները, վոր թույլ են տալիս իրենց գործադրելու վոչ միայն ուղղակի, այլև

թեկուզ անուղղակի հարկադրանք գյուղացիներին կոմունաներին միացնելու նպատակով, պետք չեն թարկվին ամենախիստ պատասխանատու թյան և հեռացվեն գյուղի աշխատանքից:

5) Ամեն տեսակ կամայական բռնազբաղվումները, այսինքն այն բռնազբաղումները, վոր չեն հենվում կենտրոնական իշխանության էջերից ցուցումների վրա, անողոքաբար պիտի հետապընդվեն: Համազումարը պնդում է, վոր պետք է ուժեղացնել այս տեսակետից Հողագործության ժողովրդական կոմիսարիատի, Ներքին գործոց ժողովրդական կոմիսարիատի, հավասարապես և Համառուս. Կ.Գ.Կ. վերահսկողությունը:

6) Ներկա մոմենտին ծայրահեղ քայքայումը, վոր աշխարհի բոլոր յերկրներում առաջացել և կապիտալիստների աճողակային շահերի համար մղված չորսամյա իմպերիալիստական պատերազմից և տառնձնապես սրվել է Ռուսաստանում, միջակ գյուղացիներին զնոււմ է դժվարին գրության մեջ:

Նկատի ունենալով այս, խորհրդային իշխանության՝ արտակարգ հարկի վերաբերյալ որենքը, ի տարբերություն աշխարհի բոլոր բուրժուական կառավարությունների բոլոր որենքներից, պընդում է, վոր հարկերի ծանրությունն ամբողջությամբ ընկնի կուլակների, շահագործող գյուղացիության փոքրաթիվ ներկայացուցիչների վրա, վորն առանձին հարստություններ և վաստակել պատերազմի ժամանակամիջոցում: Իսկ միջակ գյուղացիությունը պետք է հարկվի շատ չափավոր, միայն նրա ուժերին միանգամայն համապատասխան և չծանրաբեռնող չափով*:

* Այն հարկը, վորի մասին խոսվում է այստեղ, մացվել է Համառուս. Կ.Գ.Կ.-ի 1918 թ. նոյեմբերի 2-ի «Տաս միլիարդի միանվագ հեղափոխական արտակարգ հարկի մասին» ղեկրետով և նախատեսվում էր շարժվող բանակ ամբոցնելու և ստեղծելու համար: Ինչպես և գյուղական չքավորության կազմակերպման վերաբերյալ ղեկրետը, նա հետաձյնողում էր գյուղի դասակարգային ձևավորումն ուժեղացնելու և արագացնելու նպատակը: Գեկրետի 6-րդ կետի համաձայն հարկի բաշխումը պետք է կատարվեր էախպես, վոր քաղաքային և գյուղական չքավորությունը միանգամայն ազատվեն միանվագ արտակարգ հարկից, միջակ խավերը հարկվեն միայն փոքր գրույթներով, իսկ իր ամբողջ ծանրությամբ հարկը բնկներ քաղաքային բնակչության հարուստ մասի և հարուստ գյուղացիների վրա» («Известия В.И.И К.» № 240, 1918 թ. նոյեմբերի 2) — Խմբ.:

Կուսակցութիւնը պահանջում է, վոր միջակ գյուղացիութեան վերաբերմամբ արտակարգ հարկի գանձումը մեղմացվի՝ համեմայն դեպս, կանգ չառնելով նույնիսկ հարկի ընդհանուր գումարը նվազեցնելու առջև

7) Սոցիալիստական պետութիւնը պետք է ծավալի ամենալայն ոգնութիւն գյուղացիութեանը, վորպիսին գլխավորապես պետք է արտահայտվի միջակ գյուղացիներին մատակարարելով քաղաքային արդունարեբութեան արտադրանքներ և առանձնապէս գյուղատնտեսական բարելաված գործիքներ, սերմացու և ամեն տեսակ նյութեր՝ գյուղատնտեսական կուլտուրան բարձրացնելու և գյուղացիների աշխատանքն ու կյանքն ապահովելու համար:

Յեթե ներկա քայքայումը թույլ չի տալիս այս միջոցները կիրառելու անհապաղ ու լրիվ, ապա տեղական խորհրդային իշխանութիւնները պարտականութիւնն են բազմապատկազմ ուղիներ վորոնել չքովոր ու միջակ գյուղացիութեանը ցույց տալու ամեն տեսակ ռեալ ոգնութիւն, վորը պաշտպաններ նրան ներկա դժվար մոմենտին: Կուսակցութիւնն անհրաժեշտ է համարում սրա համար հատկացնել պետական խոշոր ֆոնդ:

8) Առանձնապէս պետք է ջանալ, վոր իրոք կենսագործվի և այն ել ամբողջութեամբ խորհրդային իշխանութեան այն որոնքը, վոր պահանջում է խորհրդային տնտեսութիւններէից, գյուղատնտեսական կոմունաներից ու բոլոր նման միավորութիւններից՝ անհապաղ ու համակողմանի ոգնութիւն ցույց տալ շրջակա ու միջակ գյուղացիներին: Միայն փաստորեն ցույց տրվող այսպիսի ոգնութեան հիման վրա իրագործելի յէ համաձայնութիւնը միջակ գյուղացիութեան հետ: Միայն այսպէս կարելի յէ և պետք է նվաճել նրա վստահութիւնը:

Համագումարը բոլոր կուսակցական աշխատողների ուղագրութիւնը հրավիրում է այն բոլոր պահանջներն անհապաղ ու ռեալ կենսագործելու անհրաժեշտութեան վրա, վորոնք նշված են կուսակցական ծրագրի ազրարային մասում, այն է՝

ա) կարգավորել գյուղացիական հողագտագործումը (հողա-

հեռավորութեան, յերկարահոգութեան վերացումը և այլն), բ) գյուղացիներին մատակարարել բարելավված սերմացու և արհեստական պարարտանյութեր, գ) բարելավել գյուղացիական տավարի ցեղը, դ) տարածել գյուղատնտեսական դիտելիքներ, ե) գյուղատնտեսական ոգնութիւնն ցույց տալ գյուղացիներին, զ) խորհրդային նորոգիչ արհեստանոցներում վերանորոգել գյուղացիներին գյուղատնտեսական ինվինտարը, է) կազմակերպել վարձակայաններ, փորձակայաններ, ցուցադրական դաշտեր և այլն, ը) գյուղացիական հոգերի միլիորացիան:

9) Գյուղացիներին կոոպերատիվ միավորութիւնները՝ գյուղական արտադրութիւնը բարձրացնելու նպատակով, առանձնապես գյուղատնտեսական միերջները վերամշակելու, գյուղացիական հոգերը վոստոկելու, տնայնագործական արդյունաբերութեանն սովորակելու և այլ նպատակով պետք և ինչպես ֆինանսական, սննդեւ և կազմակերպական լայն ոգնութիւնն ստանան պետութիւնից:

10) Համազումարը հիշեցնում և, վեր վոչ կուսակցութեան վորոշումներում, վոչ ևլ խորհրդային իշխանութեան դեկրետներում յերրեք նահանջ չի յեղել միջակ գյուղացիութեան հետ համաձայնվելու դժից: Այսպես, որինակ, գյուղում խորհրդային իշխանութեանը կառուցելու կարևորագույն հարցում, յերը սեղծվեցին չքավորութեան կոմիտեներ, հրատարակվեց մի շրջաբերական ժողկոմխորհի նախագահի ու պարենավորման ժողովրդական կոմիտարի ստորադրութեամբ, վորը մատնանշում ևր, վոր անհրաժեշտ և չքավորութեան կոմիտեներին մեջ մացնել նաև միջակ գյուղացիութեան ներկայացուցիչներին*: Զբաւորութեան կոմի-

* Լենինի ու Ա. Յուրուպայի ստորադրութեամբ կազմված այս ջրջաբերականը 1918 թ. սոստոսի 17-ին հեռագրով ուղարկվել և ըտլոր նահանգական սովկեպներին ու պարենկոմներին, նկատի ունենալով, վոր չքավորութեան կոմիտեներ կազմակերպելիս նրանք ջատ հաճախ խախտում եյին «միջակ կարողութեան ունեցող գյուղացիներին» ջահերը: Հաջորդ որը ջրջաբերականը հրատարակվեց «Известия В.И.Н.К.»-ում—«Բանավորների ու գյուղացիների դաշինքի մասին» վերնագրով.

տենները վերացնելիս Խորհուրդների Համադուսապատանյան համագումարը նշեց, Վոր անհրաժեշտ է վոլոստային խորհուրդները մեջ


«Զբաղորության կազմակերպման լողուններ—ասված էր ջրջարեբակատում,—յառ վայրերում սխալ և մեկնաբանված այն իմաստով, Վոր չքավորությունը պետք է հակադրվի մնացած ամբողջ գյուղացեիական ընտանցությանը, ինչպես անհնայանի կուլակներին ու հարուստներին, այնպես էլ գյուղացիության մեծաքանակ միջակ խավին, Վորը դեռ յերեկ քաղցում էր, Վորը միայն խորհրդային իշխանության ժամանակ ազատ զուեչ քաղցոց: Խորհրդային իշխանությունը յերեք պայքար չի մղել միջակ գյուղացիության դեմ: Խորհրդային իշխանությունը մտտապես նպաստակ է դրել իրեն՝ քաղաքային պրոլետարին միավորել գյուղական պրոլետարի ու կիսապրոլետարի հետ, Վորը չի ջանադործում աշխատավորներին Ուստի խորհրդային իշխանությունն իր գործունեյության մեջ ձգտում էր և ձգտում է բավարարել գյուղացեիության միջակ խավի կարիքները՝ քաղաքային բանվորների ու գյուղական չքավորության կարիքներին դուգընթաց: Հենց այդպիսի իմաստ ունի հողի սոցիալիզացիայի որենցը, Վոր կիրառում է քաղաքական դեկավար կուսակցությունը—բուլեիկները-կոմունիստները—իստ պահպանելով միջակ գյուղացու շահերը: Այնուհետև կանգ առնելով հուլիսի 11-ի դեկրետի վրա, Վոր վերաբերում է «Գյուղական չքավորության մասակարարումը կազմակերպելուն», ջրջարեբակական ընդգծում էր, Վոր շնորհ միջանի կետերն ուղղակի խոսում են գյուղացիության միջակ խավի մասին: Այսպես, Զ-րդ կետի ծանոթագրությունը վերաբերում է չքավորության կոմիտեիների մեջ բացի չքավորներից նաև այն գյուղացիներին ներգրավելուն, Վորոնք ոգտվում են վարձու աշխատանքից, բայց ստրկության մեջ չեն պահում իրենց համագյուղացիներին. հացի և առաջին անհրաժեշտության առարկաների բարխումը 4, 5, 6, 7 և 8-րդ կետերի համաձայն պետք է կատարվի բոլոր կարիքավոր գյուղացիներին մեջ և վոչ թե միայն գյուղական պրոլետարներին ու կիսապրոլետարներին մեջ. 9, 10, և 11-րդ կետերը, Վորոնք հաստատում են գյուղացիներին արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական գործիչներ մասակարարելը, նկատի ունեն ինչպես չքավորներին, այնպես էլ միջակ գյուղացիներին, Վորովհետև հասկանալի չէ, Վոր գյուղատնտեսական գործիչներն այլևի շատ հարկավոր են վերջիններին, քան առաջիններին: Վերջում անդական բոլոր նախ սովորեալներն ու նախ պարենկոմիտեիներն հրահանգվում էր լամեն ինչի մեջ իրենց գործունեյությունը համաձայնեցնել կենարտեսական իշխանության ընդհանուր քաղաքականությանը և անհետաձգելիորեն ձգտել միավորելու գյուղական չքավորությունն ու միջակ գյուղացիությունը՝ ապահովելով մեկին և մյուսին» («Известия В.Ц.И.К.» № 178, 1918 թ. սոստոսի 18) խմբ:

մտցնել միջակ գյուղացիութեան ներկայացուցիչներին²։ Բանվոր-
գյուղացիական կառավարութեան ու կոմունիստական կուսակ-
ցութեան քաղաքականութեանն առաջիկայումն ել պետք է մղվի
պրոլետարիատի ու չքավոր գյուղացիութեան՝ միջակ գյուղացիու-
թեան հետ համաձայնութեան կնքելու այս վտարով։

Յերկեր, XXIV հ., սուս. 2-րդ և 3-րդ հրատ. 172—175:




* Նկատի ունի Խորհուրդների VI համագումարի (1918 թ. հունվարի
4—9) բանաձևը՝ ընդունված չքավորութեան կոմիտեները վերակազմելու և
նրանք ժողոտային ու գյուղական խորհուրդներով փոխարինելու մասին զե-
կույցման առթիվ (տես Յերկեր, XXIII հ. «Վազկերպարներ և նյութեր», սուս. հրատ.
եջ 534—535)։ Այն բանաձևում, ժոր պատճառարանում և քաղաքում ու գյուղում
միտանական խորհրդային կազմակերպութեան ստեղծելու անհրաժեշտու-
թեանը, բոլոր նահանգական ու դաժատական խորհուրդներին առաջարկվում եր
անհատապես ձեռնարկել ժողոտային ու գյուղական խորհուրդների վերընտրու-
թեաններին՝ եզրանք քաղաքային խորհուրդների որինակով դարձնելով խորհրդ-
դային ինքնառնութեան ու կոմունիստական ղինարարութեան իսկական մարմին-
ները։ «Միայն այս պայմաններում, —ասված եր բանաձևում, —չքավոր և նրան
հարող միջակ աշխատավոր գյուղացիութեանը լիակատար հնարավորութեան
կտանա՞ վերջնականապես իր համար ամբողջացնելու սոցիալիստական հեղա-
փոխութեան նվաճումները»։ «Միտոտային ու գյուղական խորհուրդների վեր-
ընտրութեան կարգի մասին» հրահանգի մեջ, ժոր ի կատարումն համագումարի
այս վերջումն մշակել եր Համառուսական Կ.Գ.Կ. և հրատարակվել 1918 թ. դեկ-
տեմբերի 4-ին, նույնպես ընդգծվում եր, ժոր «վերընտրութեանները հեղա-
փոխական իմաստ կունենան միայն այն ժամանակ, յերբ Խորհուրդներն ընտր-
վեն գյուղական չքավորութեան և միջակ աշխատավոր գյուղացիութեան կող-
մից» («Известия В.Ц.К.» № 263, 1918 թ. դեկտեմբերի 4)։—Պմբ.:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

- Զեկուցում դուրի աշխատանքի մասին ՌԿ (Բ) Կ
VIII համագումարին (1919 թ. մարտի 23) . . . 5
- ՌԿ (Բ) Կ VIII համագումարին կենտրոնական կո-
միտեյի տված հաշվետվությունից (1919 թ.
մարտի 18) 28
- Բանաձև միջակ դուրացիությանը վերաբերվելու
մասին 35



Տիր. խմբ. Ա. Խաչատրյան
Կանգ. սրբագրիչ Վ. Քերգրիսյան
Սրբագրիչ Ա. Տ.Մկրտչյան
Նախընտ. արվեստ 19 ապրիլի 1934 թ.
Տպիչի բալլառարվեստ 22 մայիսի 1934 թ.

Հաս. №215, Ինդ. $\frac{\text{ПЛИ}}{\text{НП}}$

Գլխավոր 7940 (թ), Տիրանո 6.000

Չափեր № 118

Քաղի լիտիք 62 x. 84

3 աչ. քեր. (1 աչ. քերանո 34,560 աչ. ճանո)

Վաճառատնի սպասարան. Տերեղան, Ալիսիսիսիսյան, 27

Тех. редактор С. Хачатрян

Контр. корректура В. Терзибашян

Корректор А. Т.-Мкртчян

Сдано в набор 19 апреля 1934 г.

Подписано к печати 22 мая 1934 г.

Армпартиздат № 215, Инд. $\frac{\text{ПЛИ}}{\text{НП}}$

Типография Партиздата ЦК КП(б)А

Зривань, ул. Аллавердиян, № 27

ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



220038556

(164)

972.С 40 4.

А ^{II} ЦЕНА 40 К.
38556 ~~38556~~
~~38556~~



В. И. ЛЕНИН
О работе в деревне

Партиздат 1934 Эривань